

## ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը մասնակցել է Ռուսաստանի ԳԱ հիմնադրման 300-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվիրակությունը ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանի գլխավորությամբ սույն թվականի փետրվարի 8-ին մասնակցել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրման 300-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ՌԳԱ արտասահմանյան անդամ Աշոտ Սադյանը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայում պարզատարվել է «Ռուսաստանի գիտությունների ակադեմիան 300 տարեկան է» մեդալով, որը հաստատվել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի՝ 2022թ. դեկտեմբերի 5-ի N 874 հրամանով: Մեդալը ՀՀ ԳԱԱ նախագահին է հանձնել ՌԳԱ նախագահ, ակադեմիկոս Գենադի Կրասնիկովը:

«Ռուսաստանի գիտությունների ակադեմիան 300 տարեկան է» մեդալ է շնորհվել նաև Բելառուսի գիտությունների ակադեմիայի նախագահ, ՌԳԱ արտասահմանյան անդամ, ակադեմիկոս Վլադիմիր Գուսակովին:

ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը Կրեմլի պետական պալատում մասնակցել է ՌԳԱ հոբելյանական միջոցառմանը, որտեղ շնորհավորական ելույթով հանդես է եկել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Նա ընդգծել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի դերը կառավարական և ռազմավարական որոշումների կայացման գործում: Նշել է, որ ստորագրել է հրամանագիր ՌԳԱ նախագահին Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդում ընդգրկելու մասին:

Ըստ Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ բոլոր նշանակալից նախաձեռնությունները պետք է ՌԳԱ-ի կողմից ենթարկվեն խոր, օբյեկտիվ գիտական փորձաքննության: Բուհերի և դպրոցների դասագրքերը պետք է պարտադիր ակադեմիական քննություն անցնեն, ԲՈՒՀ-ի գործառնությունները վերապահվում են ՌԳԱ-ին և այլն:

Վլադիմիր Պուտինը հայտնել է, որ պետական բյուջեից ՌԳԱ-ի ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ աճել է մինչև 6 միլիարդ ռուբլով: Նաև մեկնակցել անգամ ավելացել են ակադեմիկոսների և թղթակից անդամների ամսական վճարները:

ՌԳԱ 300-ամյակի առթիվ պետական պարգևների են արժանացել առաջատար գիտնականներ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Գիրք ԿԱԻՐԵԼՈՒ ՕՐԿԱ ԱՄԹԻՎ

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում կազմակերպվել էին մի շարք միջոցառումներ Գիրք ԿԱԻՐԵԼՈՒ ՕՐԿԱ առթիվ:

Գրադարանից օգտվող ուսանողներին հաճելի անակնկալ էր սպասվում: «Գիրքը ուղեցույց ուսանողի համար» խորագրով ա-



նակնկալի ողջ նպատակը գրադարան-ուսանող ջերմ հարաբերությունների ամրապնդումն էր: Գրադարան այցելած յուրաքանչյուր ուսանող նախ մասնակցում էր վիճակահանությանը, ապա նվեր ստանում համապատասխան համարով նախանշված գիրքը:

Օրվա խորհրդին համահունչ՝ յուրաքանչյուր ուսանող գրադարանի կողմից ստացավ իր նվեր գիրքը:

Գրքատոմի առթիվ այս տարի ևս գրադարանի տնօրինությունն առանձնացրեց լավագույն ընթերցողներին, որոնցից վիճակահանությամբ ընտրեց երեք հոգու, տոմի խորհրդով պայմանավորված՝ նվիրեց գրքեր և շնորհակալագրեր հանձնեց: Բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառնաթյանը և պատմական գիտությունների թեկնածու Կարեն Թոփաթյանը գրադարանի հավատարիմ և ակտիվ ընթերցողներն են՝ գնահատված թե՛ անձնակազմի, թե՛ տնօրնության կողմից:

Այսուհետ յուրաքանչյուր տարի Գիրք ԿԱԻՐԵԼՈՒ ՕՐԿԱ շրջանակում նույն սկզբունքով գրադարանի տնօրինությունը գրքեր կնվիրի իր ընթերցողներին՝ գնահատելով նրանց՝ առ գրադարանն ունեցած նվիրվածությունն ու սերը:

## ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում

\*\*\*

Ուռուցքային հիվանդությունների բուժման համար ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում կատարվում են *Macrovipera lebetina obtusa* թույնի և ցլի ենթաստամոքսային գեղձի ֆոսֆոլիպազ A2-ի ու ֆոսֆորային դեմոդերմերների, ֆոսֆոր պարունակող ամֆիֆիլային դեմոդերմերների և արծաթե մանոմասնիկների փոխազդեցության բացահայտման համեմատական հետազոտություններ:



«Ֆոսֆորային դեմոդերմերները, ֆոսֆոր պարունակող ամֆիֆիլային դեմոդերմերները և արծաթե մանոմասնիկները ժամանակակից ուռուցքաբանության համար ակտիվ մշակվող մանոմասնիկներ են, որոնց նախատիպերն արդեն հասել են կլինիկա: Դրանց փոխազդեցության բացահայտումը կենսաբանորեն ակտիվ միացությունների հետ չափազանց կարևոր է թիրախային դեղորայքի տեղափոխման ընթացքում տեղի ունեցող պրոցեսների խորքային մեխանիզմների պարզաբանման համար,- ասաց ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստի-

տուտի տնօրեն, հետազոտական խմբի ղեկավար, պրոֆեսոր Նաիրա Այվազյանը և հավելեց,- նախկինում մենք ցույց ենք տվել, որ օձի թույնի ակտիվ բաղադրամասերը կարող են ունենալ դրական ազդեցություն ինչպես արագ զարգացող քաղցկեղի տարբեր տիպերի (մասնավորապես սարկոմաների), այնպես էլ բազմաթիվ այլ (մասնավորապես բորբոքային) հիվանդությունների կասեցման գործում: Հետևաբար՝ գնահատվել է թույնի բաղադրիչների սինթեզի փոխազդեցության աստիճանը, այդ թվում՝ մասնավորապես սերմնի մանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ՝ ընկալելով վերջինների՝ որպես օրգանիզմում դեղամիջոցների թիրախային տեղափոխման կրիչ»:

Հետազոտության արդյունքները հրապարակվել են «Journal of Biotechnology», «Artificial Cells, Nanomedicine, and Biotechnology», «GigaScience» ամսագրերում:

«Մեկուկես տարում մոտ 35 հոգու ունի հողվածք: Այն գեկուցվել է մի շարք հեղինակավոր միջազգային գիտաժողովներում՝ հրավիրված գեկույցի ձևաչափով,- ասաց Նաիրա Այվազյանը:

Հետազոտող թիմի 8 մասնակցից 6-ը երիտասարդ գիտնականներ են, 2-ը՝ ԵՊՀ-ի և Հայ-Ռուսական համալսարանի ուսանողներ:

Հետազոտությունն իրականացվում է ՀՀ ԳԱԱ Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի բուժաբանական հետազոտությունների լաբորատորիայի բազային ֆինանսավորմամբ, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Հայ-բելառուսական համատեղ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

\*\*\*

ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում իրականացված գիտական հետազոտությունները ցույց են տվել հյուսվածքաբանական մոլուցների հիպերսպեկտրալ անալիզի մեթոդի վաղից հայտնությունը: Ստացվել են նոր տվյալներ, որոնք հաստատում են որոշ սթաֆիլոկոկների կառուցվածքային ամբողջականությունը և ապաքցչայնացման արդյունավետությունը:

Սթաֆիլոկոկները մատրիցաներ են, որոնք կենսաբանական կրիչների համադրությամբ արագացնում են հյուսվածքի վերականգնումը: Կատարելագործվել են ցիտոտոքսիկության և իմունազենության գնահատման մեթոդները, և փոշիացված սթաֆիլոկոկներ են կիրառվել՝ ավելի վստահելի արդյունքներ ստանալու համար: Իմունազենության գնահատման փորձաչափումները հարստացվել են նոր մեթոդներով, ինչպիսին է հոսքային ցիտոմետրիան:

«Մեր լաբորատորիայի կողմից մշակվող տեխնոլոգիաներն ունեն երկու հիմնական կիրառություն: Առաջինը նոր բուժման մեթոդների մշակումն է վնասված հյուսվածքների վերականգնման համար: Թեպետ այս հետազոտական ուղղությունը դեռևս հիմնարար գիտության մակարդակում է, սակայն ունի կիրառական բազմաթիվ կարևոր հեռանկարներ: Մյուս ուղղությունը վերաբերում է մշակված հյուսվածքների կիրառմանը՝ որպես մոդել տարբեր պրեպարատների և դեղանյութերի փորձարկման նպատակով: Նոր մոդելների մշակումը հնարավորություն կտա իրականացնելու ճշգրիտ և էթիկապես ոչ խնդրահարույց փորձարկումներ,- ասաց գիտական խմբի ղեկավար, ինստիտուտի իմունոլոգիայի և հյուսվածքային ճարտարագիտության լաբորատորիայի վարիչ Զարուհի Կարաբեկյանը:

Նա նշեց, որ լաբորատորիայում ներկա պահին գործում են մի քանի հետազոտական նախագծեր, որոնց նպատակն է հյուսվածքային ճարտարագիտության մեթոդների կիրառմամբ լաբորատոր պայմաններում տարբեր հյուսվածքների կառուցվածքների ստացումը և թեստավորումը: Նախագծերն արժանացել են մի քանի դրամաշնորհների և ֆինանսավորման ծրագրերի, այդ թվում՝ ANSEF դրամաշնորհ, EIF-PMI հետազոտական աշխատանքների ֆինանսավորում, FAST ADVANCE STEM գիտահետազոտական կրթա-



թողակ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Ասպիրանտների և երիտասարդ հայցողների աջակցության դրամաշնորհային ծրագիր:

Ներկայում լաբորատորիան սերտորեն համագործակցում է Բելառուսի Հանրապետության Սախարովի անվան էկոլոգիայի միջազգային պետական ինստիտուտի, ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի հետ, ինչպես նաև առանձին նախագծերի շրջանակներում համագործակցում է ՌԴ Յակուտսկի Գրաֆենային տեխնոլոգիաների հետազոտական կենտրոնի, ինչպես նաև BIO-SEE կենսապատկերման միջազգային ասոցիացիայի հետ:

Իմունոլոգիայի և հյուսվածքային ճարտարագիտության լաբորատորիայի կողմից մշակված որոշ մեթոդներ աշխատակիցների համահեղինակությամբ տպագրվել են պրոֆեսոր Նաիրին Սարվազյանի խմբագրությամբ հրատարակված գրքում՝ Sarvazyan N.(eds) Tissue Engineering. Learning Materials in Biosciences. Springer, Cham., April, 2020:

Հետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվել են առանձին գրքով, գիտական ամսագրերում, ինչպես նաև ներկայացվել են միջազգային հարթակներում՝ գիտաժողովներին, ցուցահանդեսներին և սեմինարներին:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



## Մեղրիում Կրեդի ունեցավ «ԱՐԵՎԻԲ. ՊԱՏՄԱՐՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԳԵՐ»

### խորագրով միջազգային գիտաժողովը

2023 թ. նոյեմբերի 17-18-ը Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում տեղի ունեցավ «Արևիք (Մեղրի). պատմամշակութային ժառանգություն և միջմշակութային կապեր» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին 28 գիտնականներ ու գիտաշխատողներ ինչպես Հայաստանի Հանրապետության գիտակրթական կենտրոններից (Երևանի պետական համալսարան, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի թանգարան, ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա և այլն) և ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտներից (Հնագիտության և ազգագրության, Պատմության, Լեզվի, Գրականության, Արվեստի), այնպես էլ Ռուսաստանի ազգագրական թանգարանից, Գերմանիայից և Սոֆիայի (Բուլղարիա) համալսարանի Արևելյան լեզուների և մշակույթի կենտրոնից:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը և Երևանի պետական համալսարանը, աջակիցներն ու գործակիցները՝ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը (ՀՈՒՖՀՀ) և «Երկիր և մշակույթ» համազգային կազմակերպությունը (ԵՄԿ): Միջազգային գիտաժողովի 30 զեկուցումները նվիրված էին Սյունիքի պատմական Արևիք գավառի (ներկայիս Մեղրու ենթաշրջանի) պատմամշակութային ժառանգությանն ու հարևան երկրների հետ միջմշակութային կապերի զանազան հայեցակետերին: Գիտաժողովի ընթացքում պատմական Արևիք գավառը դիտարկվեց նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության տեսանկյուններից:

Գիտաժողովը բացեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը, որից հետո ողջույնի խոսքով հանդես եկան Սյունիքի փոխմարզպետ Հայկ Հարությունյանը և Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Ջաքարյանը: Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը իր ողջույնի խոսքից հետո անմիջապես անցավ թեմատիկ զեկուցմանը, որը վերաբերում էր Արևիք-Մեղրիի ունեցած դերին Հայաստանի պատմամշակութային և աշխարհաքաղաքական հոլովույթում: Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի զեկուցումը նվիրված էր Մեղրիի աշխարհաքաղաքական նշանակությանը՝ որպես Հայաստանի հարավային դարպաս: Առաջին միստում, որը վերաբերում էր Արևիքի պատմագիտությանն ու մշակութաբանությանը, ներկայացվեցին նաև հնամշակութաբանական և աղբյուրագիտական-տեղանվանագիտական զեկուցումներ:

Երկրորդ միստում, որը նվիրված էր Արևիքի հնագիտությանն ու պատմագիտությանը, ներկայացվեցին գավառի ամրոցաշինությանը, ճարտարապետությանը, նոր շրջանում սահմանների ձևավորմանը և նշանավոր մեղրեցիներին նվիրված զեկուցումներ: Երրորդ միստը գավառը դիտարկում էր արվեստաբանական և հուշարձա-

նագիտական տեսանկյուններից, ներկայացված զեկուցումները բնույթ էին տարածաշրջանի եկեղեցիների հորինվածքը, նկարագրողումները, խաչքարային վիմագրությունները, հուշարձանների աղբյուրագիտական հիշատակումներն ու տեղադրությունը: Յուրաքանչյուր օրվա ամփոփումից հետո գիտաժողովի մասնակիցներն այցելում էին տեղի տեսարժան վայրերը. առաջին օրն անմիջապես ժամանումից հետո՝ Մեղրու Ս. Հովհաննես կամ Մնասպատանաց վանք և Մեծ Թաղի Ս. Աստվածածին եկեղեցի, իսկ երկրորդ օրը՝ Կարճևան գյուղ, որտեղ ծանոթացան տեղի պատմական հուշարձաններին ու ժողովրդական ճարտարապետությանը, եղան գյուղի եկեղեցուն, դիտեցին Ծոր բնական հուշարձան-ջրվեցի:

Առաջին միստը նվիրված էր Արևիքի ազգագրությանն ու աղբյուրագիտությանը. միստը ակվեց գիտաժողովի օտարերկրյա մասնակիցների ելույթներով: Նրանք ներկայացրին Արևիքին հարևան Գողթն գավառի հայկական բնակավայրերի տոնածխական և կրոնապաշտամունքային կյանքը լուսաբանող, ինչպես և Նախիջևանի բնակչության շրջանում վերջին տարիներին կատարած իրենց դաշտային հետազոտությունները: Այս միստում զեկուցվեցին նաև աղբյուրագիտական և ժողովրդագրական նյութեր, Արևիք գավառի ժողովրդական տոներին առնչվող դիտարկումներ: Երկրորդ միստը նվիրված էր ազգագրությանն ու բանագիտությանը, ներկայացվեցին Մեղրու շրջանի բուսափառաբանական մշակույթին, վայրի ուտելի բույսերից պատրաստվող կերակուրներին, բուսածուկներին, ինչպես նաև Մեղրու շրջանի ազգագրությանն ու բանահյուսությանը վերաբերող արխիվային նյութերին առնչվող զեկուցումներ:

Գիտաժողովի բուն մասի ավարտից հետո տեղի ունեցավ շուրջ երեքժամյա աշխատաժողով, որի ընթացքում ներկայացվեցին Մեղրու շրջանի մշակութային-գրոսաշրջային զարգացման հեռանկարները, Մեղրու Ս. Հովհաննես վանքի 2016-2020 թթ. պեղումների արդյունքները, 2021-2023 թթ. իրականացված «Մեղրու տարածաշրջանի հուշարձանների ուսումնասիրություն» ծրագրի արդյունքները: Ավարտին մասնակիցներն այցելեցին Վահրավար գյուղ և Կարմիր վանք, ինչպես և Մեղրու Փոքր Թաղի Ս. Հովհաննես եկեղեցի, որը հայտնի է իր բացառիկ որմնանկարներով: Վերադարձի օրը գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Շվանիձոր գյուղ, տեսան միջնադարյան ջրանցույցը և շրջեցին հին գյուղի ավերակներով:

Գիտաժողովի կազմկոմիտեի անդամներն էին՝ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ տնօրեն Արսեն Բոբոխյանը, ԵՄԿ հայաստանյան մասնաճյուղի նախագահ Դավիթ Դավթյանը, ՀՀ ԳԱԱ ՊԻ ավագ գիտաշխատող Համո Սուքիասյանը, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ և Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող Արսեն Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ փոխտնօրեն Տորք Դավթյանը:

**ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ**

## ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼՍԱՐԱՆ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇԱԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը 2023 թ. մեծ իր հիմնադրման 100-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ տեղի ունեցան մի շարք միջոցառումներ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ համատեղ գումարվեց գիտաժողով, որի նպատակն էր բացահայտել հայ երաժշտարվեստում Ռ.Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի և նրա շրջանավարտների ունեցած դերն ու նշանակությունը և քննության առնել հայ ականավոր կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի կյանքի, ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեության ուսումնասիրության հարցերը:

Քոլեջի հոբելյանական կարևոր նախաձեռնություններից մեկն էլ կրթօջախի 51 լսարանների վերանորոգումն է, որոնք այդուհետ անվանակոչվելու են քոլեջի՝ հայ երաժշտարվեստում կարևոր հետք թողած նախկին շրջանավարտների և վաստակաշատ դասատուների անուններով: 2023-ին լսարաններն անվանակոչվեցին դասատուների՝ հայ երաժշտության անվանի գործիչներ և հմուտ մանկավարժներ Էդուարդ Բաղդասարյանի, Բորիս Սակկիլարիի, Գեորգի Միմասովի և Արմեն Բուդաղյանի, ինչպես նաև շրջանավարտների՝ Հիսուս ժողովրդական արտիստներ Ռաֆայել Մանգասարյանի, Լուսինե Ջաքարյանի և Ռոբերտ Ամիրխանյանի, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչներ Արամ Սաթյանի, Լևոն Չաուշյանի և Կոնստանտին Պետրոսյանի անուններով:



2024 թվականի փետրվարի 5-ին քոլեջի N 7 լսարանն անվանակոչվեց քոլեջի նախկին սան (1984-1987) և դասատու (1991-2003), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Գրիգորի Ասատրյանի անունով: Աննա Ասատրյանը 2-րդ երաժշտագետն է, ում անունով լսարան է անվանակոչվել, և առաջին երաժշտագետը, որը և շրջանավարտ է, ու դասատու և սերտորեն կապված է հարազատ կրթօջախի հետ:

Հանդիսավոր միջոցառումը բացեց քոլեջի տնօրեն, այս նախաձեռնության հեղինակ Վարազդատ Խաչումյանը:

Միջոցառմանը մասնակցում էին և շնորհավորական խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յուրի Սուվարյանը և Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը:

Հանդիսավոր միջոցառման ավարտին Համագործակցության հուշագիր կնքվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի միջև: Ի դեպ, այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում աշխատող երաժշտագետներից 6-ը, այդ թվում՝ արվեստագիտության 2 դոկտոր և 4 թեկնածու, քոլեջի տարբեր տարիների շրջանավարտներն են:

Աննա Ասատրյանն ի հիշատակ իր հոր՝ պետական գործիչ Գրիգոր Ասատրյանի, 2024 թ. սեպտեմբերից սահմանելու է Տիգրան Չուխաճյանի անվան լիթաթոշակ, որը կտրվի քոլեջում բարձր առաջադիմությանը սովորող՝ էջմիածնի Սակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցի նախկին շրջանավարտներից մեկին. դրա շնորհիվ տվյալ ուսանողը կկարողանա վճարել իր ուսման վարձը: Իսկ մինչ այդ վերանորոգված լսարանին Աննա Ասատրյանը նվիրեց չեխական «Rosler» մակնիշի դաշնամուր:

**Սարգարիտա ԲԱՍՄԱՅԱՆ**  
**Արվեստագիտության թեկնածու**

## ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի նոր հետազոտությունը

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում զենախմբներային մեթոդների կիրառմամբ կառուցվել են մի շարք կայուն, կենսունակ, լավ վերարտադրվող և մրցունակ քաղցրահամ ջրերի բնակիչ միաբջիջ ցիանոբակտերիայի (*Synechocystis*) կլոններ, որոնք ունակ են լաբորատոր պայմաններում սինթեզելու 0,170-0,245 գ/լ 5-ամինալուլինաթթուն (ԱԼԹ):

ԱԼԹ-ն գործնականում կիրառության տեսանկյունից արժեքավոր օրգանական միացություն է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԼԹ-ն ընդունակ է կուտակվելու քաղցկեղածին բջիջներում՝ վերածվելով ֆոտոսինթեզի լաբատորիա-պրոտոպրոֆիրին IX-ի, որն առաջացնում է ակտիվ (սինդեթ) թթվածին տեսանելի լույսով միանվագ ճառագայթման ժամանակ, այն կիրառում են տեղայնացված տարատեսակ չարորակ ուռուցքների ֆոտոախտորոշման, ֆոտոդինամիկ թերապիայի, ինչպես նաև ոչ քաղցկեղային բնույթի մաշկային հիվանդությունների բուժման համար: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ԱԼԹ-ինդուկցված ֆլյուո-

րեսցենցիայի օգտագործման հնարավորությունը չարորակ ուռուցքի տեղային տարածման, ներվիրահատական ախտորոշման, արդյունավետ յուրահատուկ բուժման և հետագա վերահսկման համար:

ԱԼԹ-ի օգտագործման հեռանկարային կիրառությունը հանգեցրել է աշխարհի բազմաթիվ երկրներում դրա արտադրության նկատմամբ նկատելի հետաքրքրության:

Ծիրանագույն ֆոտոսինթեզող բակտերիաների բնական շտամներն ի վիճակի են սննդամիջավայրում կոմբիոցին առումով շահութաբեր քանակությամբ ԱԼԹ արտազատելու: Այդ փաստը հաստատվել է նաև կենտրոնում իրականացված հետազոտություններում:

«Մենք առաջին անգամ հաջողությամբ իրականացրել ենք ԱԼԹ սինթեզան կողմորոշող hemA գենի փոխանցում, որը կլոնավորվել է էվոլյուցիոն տեսանկյունից ավելի ցածր օրգանիզմից (ծիրանագույն ֆոտոսինթեզող բակտերիա) էվոլյուցիոն առումով բարձր՝ ցիանոբակտերիայի մեջ:

*Rhodobacter spheroides* շտամի hemA գենը մեկուսաց-

վել, բազմապատկվել և կլոնավորվել է երկու ինտեգրատիվ պլազմիդների (վեկտորների) մեջ, որոնք նախագծվել և ստեղծվել են հատուկ հետերոլոգ սպիտակուցների էքսպրեսիայի համար՝ հաջորդականությամբ տարբերվող պրոմոտորում ապահովելով հետերոլոգ գենի տրանսկրիպցիան:

Ուսումնասիրությունների արդյունքում ստացվել են մի քանի կայուն, կենսունակ, լավ վերարտադրվող և մրցունակ *Synechocystis*-ի կլոններ, որոնք ունակ են լաբորատոր ֆերմենտացիայի պայմաններում սինթեզելու 0,170-0,245 գ/լ ԱԼԹ,-, ասաց գիտական խմբի ղեկավար, կենտրոնի փոխտնօրեն, այլընտրանքային էներգիայի աղբյուրների լաբորատորիայի վարիչ Վիգեն Գոգինյանը:

Արդյունքներն ամփոփված են մի շարք գիտական աշխատություններում:

Հետազոտությունն իրականացվել է Իտալիայի Պադուա-յի համալսարանի կենսաբանության ամբիոնի պրոֆեսոր Էլիզաբետա Բերգամտինոյի (գիտական խորհրդատու) ակտիվ մասնակցությամբ՝ «Ցիանոբակտերիալ ռեկոմբինանտ շտամների կառուցումը՝ 5-ամինալուլինաթթվի արտադրության նպատակով» նախագծի շրջանակներում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ՄՏ-ԲԵՐԻ ՀԱՐԹ-ԱԿ



## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸԱՅԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԸԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Մեր ժողովրդի պատմական հիշողության և ազգային ինքնության հիմնահարցերի ուսումնասիրությունը մշտապես արդիական և կարևոր խնդիրներից է:

Ժամանակակից հայ հասարակության պատմական հիշողության առանձնահատկությունները պարզաբանելու համար մենք դեռևս 2022 թ. անցկացրինք լայնածավալ համազգային սոցիոլոգիական մերկայացուցչական ուսումնասիրություն, որի արդյունքների հիման վրա փորձեցինք վերլուծել բնակչության հավաքական սոցիալական հիշողության պատմական խորությունը, կառուցվածքը և ազգային ինքնության հիմնական բնութագրերը:

Մեզ հետաքրքրում էին այսօրվա մեր հայության պատմական հիշողության խորության ու կառուցվածքի մանրամասները և դրանց ազդեցությունն ու կապն ազգային ինքնության հետ:

«Ե՞րբ են առաջացել հայերը» հարցին հարցվածների մեծ մասը՝ 55,5%-ը, համարում է, որ հայերն առաջացել են 2-6 հազար տարի առաջ: Սա մոտավորապես համապատասխանում է մեր պատմաբանների կողմից ընդունված ժամանակագրությանը: Հարցվածների կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ պատասխաններն ավելի ու ավելի էին համընկնում գիտական պատմագրության մեջ ընդունված տարեթվի հետ:

Հետաքրքիր էր պարզել, թե ուրիշ որ հնագույն ազգերի հետ են հայերն իրենց համեմատում: «Ո՞ր ազգերն են հայերից ավելի հին» ժամանակակից հայերի կարծիքով մեզանից ավելի հին ազգեր են համարվում եգիպտացիները, հույները, հռոմեացիները, հրեաները, ասորիները, պարսիկները, չինացիները և հնդիկները: Միաժամանակ մարդկանց 1/3-ը (29,4%) ուրիշ ոչ մի ազգ չի նշել: Նրանք հայերից ավելի հին ազգ չգիտեն, հատկապես մեծահասակները (36,7%):

«Ո՞ր ազգերին են հայերն իրենց ավելի շատ նմանեցնում»: Այս հարցի պատասխանները մեզ առանձնապես չզարմացրին: Ինչպես պարզվեց, հայերը համարում

են, որ իրենք ավելի շատ նման են վրացիներին (35,9%), հույներին (34,3%), ռուսներին (23,4%) և հրեաներին (21,9%): Նրանց կարծիքով բոլորովին նման չեն արաբներին (85,8%), ամերիկացիներին (84,2%), ֆրանսիացիներին (80,2%), թուրքերին (78,4%) ու պարսիկներին (78,4%): Ավագ սերնդի ներկայացուցիչները (70+ տարիքի) ավելի հաճախ էին նշում նմանությունը ռուսների և վրացիների հետ, իսկ երիտասարդները՝ հույների, հրեաների և ֆրանսիացիների հետ:

«Ի՞նչ եք կարծում, հայերը Հայաստանում բնի՞լ, թե՞ եկվոր ազգ են» հարցին 91,6%-ը պատասխանել էին «Բնիկ ազգ են», իսկ 5,6%-ը՝ «Եկվոր են»: Ինչպես տեսնում ենք, այս հարցին ճշշող մեծամասնությունը պատասխանում է, որ իրենք բնիկ ազգ են: Մեզ հետաքրքրում էր նաև այն, թե որքան է եղել պատմական Հայաստանի ա-

մենամեծ տարածքը: Հարցվածներից կեսի համոզմամբ պատմական Հայաստանը զբաղեցնում էր երեք ծովերի (Միջերկրական, Սև ու Կասպից ծովերի) միջև ընկած տարածությունը:

«Ովքե՞ր են հայոց պատմության ամենամեծ թագավորները»: Հարցվածների ճշշող մեծամասնությունը (71,4%) համարում է Տիգրան Մեծին: Եվս 14,4%-ը նշել էին Պապ թագավորին, 14,6%-ը՝ Աշոտ Երկաթին, 11,6%-ը՝ Արտաշես թագավորին և 9,6%-ը՝ Տրդատին: Ավելի քիչ թվով հարցվածներ նշել էին մեր այլ թագավորների անուններ: Ինչպես տեսնում ենք, շատերը նշել են հայոց թագավոր Տիգրան Մեծի անունը: Ըստ երևույթին այստեղ մենք բացահայտել ենք հավաքական պատմական հիշողության ինչ-որ հիմնաքարային սկզբնագիծ: Փաստորեն մեր ուսումնասիրության մեջ մենք առերեսվել ենք ազգային պատմության հավաքական ընկալման հիմնասյուների:

«Որո՞նք են հայոց պատմության ամենամեծ հաղթանակները»: Առաջին հինգ տեղերում նշվել են հայոց պատմության ամենամեծ հիմնական հաղթանակները՝ Ղարաբաղի ազատագրումը 1991-1994 թթ. (28,6%), Ավարայրի ճակատամարտը (27,2%), Սարդարապատի ճակատամարտը (21,4%), Շուշիի ազատագրումը (19,7%) և Հայրենական մեծ պատերազմը 1941-1945 թթ. (9,5%): Եթե Ղարաբաղի ազատագրմանն ավելացնենք Շուշիի ազատագրումն ու մայիսյան հաղթանակները, ապա կստացվի 54,3%: Հարցվածներից կեսի կարծիքով ամենամեծ հաղթանակներն ամենամոտ անցյալում ձեռք բերված հաղթանակներն են: 2018 թ. «թավշյա հեղափոխությունը» նշել էին հարցվածների 1,5%-ը: Այսպիսով, մեր ուսումնասիրությունը փաստում է, որ ժամանակակից հայ հասարակության պատմական հիշողության մեջ ամրագրվել են մեր մոտ անցյալում ժողովրդի կողմից ձեռքբերված հաղթանակները:

«Որո՞նք են համարվում հայոց պատմության մեջ ամենամեծ պարտությունները»: Հարցվածների ճշշող մեծամասնությունը (74,4%) ամենամեծ պարտություն է հա-

մարել 2020 թվականի 44-օրյա պատերազմը: Սրան կարելի է ավելացնել նաև Գրանց, ովքեր ամենամեծ պարտություն են համարել Շուշիի հանձնումը (5,9%): Նկատենք, որ հարցվածների միայն 15%-ն է 1915 թ. Ցեղասպանությունը համարում որպես ամենամեծ պարտություն:

Ազգային պատմության ամենահաջող շրջան են համարվել (ըստ հերթականության) Տիգրան Մեծի գահակալության ժամանակը, Խորհրդային Միության շրջանը և Հայկ Նահապետի հեռավոր պատմական ժամանակաշրջանը: Ընդ որում որքան բարձր է հարցվողների տարիքը, այնքան շատ է սովետական շրջանը հաջողված համարողների տոկոսը (48,5%):

Այսպիսով, մեր ուսումնասիրությունների շնորհիվ կարող ենք փաստել, որ ժամանակակից հայ հասարակության պատմական հիշողության խորությունն ընդգրկում է ավելի քան 2000 տարվա ժամանակաշրջան:


Ժողովրդի պատմական հիշողության հիմնական աղբյուրներն են առաջին հերթին՝ պատմության դպրոցական դասագրքերը, հանրակրթական միջնակարգ կրթության ծրագրերը, գեղարվեստական գրականությունը, առասպելներն ու ժողովրդական բանահյուսությունը, ինչպես նաև արվեստի գործերը և պատմական գեղարվեստական կինոկարները: Լայն զանգվածների պատմական հիշողության ձևավորմանը նպաստում են նաև ընտանեկան պատմություններն ու ավանդույթները, լուսանկարները, փաստաթղթերը:

Մեր երկրի առջև ծառացած մարտահրավերների պայմաններում հայոց պատմական հիշողության և ազգային ինքնության հարցերի վերաբերյալ իշխանության ամենատարբեր օղակներում ներկայումս դրսևորվող մոտեցումներն ու պատմական դեպքերի և դեմքերի վերաբերման շարունակական փորձերը, մեղմ ասած, անհասկանալի ու անընդունելի են: Լրջագույն ուշադրություն պետք է դարձնել դպրոցական դասագրքերի (մասնավորապես) պատրաստմանը, ինչն այսօր, ցավիք, խնդրահարույց և բարձիթողի վիճակում է: ԿԳՄՍ նախարարության՝ գիտնականների մասնագիտական կարծիքը հետևողականորեն անտեսելու քաղաքականությունն ի վերջո կարող է հանգեցնել մեր պատմական հիշողության հավաքական պատկերի աղճատմանը, եթե ոչ կորստին:

**Գևորգ ՊՈՂՈՍՅԱՆ**  
Սոցիոլոգիական գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

**Խմբագրության կողմից** - Անչափ մտահոգիչ են նաև վերջերս շրջանառվող «Հայոց պատմություն» և «Հայաստանի պատմություն» եզրույթների՝ հայոց պատմագիտության հետ ընդհանրապես կապ չունեցող անձանց անհարկի շահարկումները: Ինչու՞ն է հիմա առաջ քաշվեց «Հայրենիքը դա պետությունն է» գաղափարը, և ի՞նչ հեռահար նպատակներ է այն հետապնդում: Մեր ժողովրդի համար ծանրագույն այս ժամանակաշրջանում արդյոք չկա՞ն լուծման կարոտ կարևորագույն այլ խնդիրներ: Մի՞թե արևելքի ժամրից չէ, երբ հայրենիքի և հայրենասիրության մասին ծանարտակողները որոշել են պատմության դասեր տալ պատմաբաններին: Այժմ էլ ՀՀ Սահմանադրության և «Անկախության հռչակագրի» որոշ դրույթներ վերամայելու կոչեր են հնչում: Այսպես մինչև ո՞ր... Իսկ մեր գիտական հանրությունը, մեծավ մասամբ, շարունակում է լռել:

## ՄԵԾԱՆՈՒՄ ԳԻՏԱՆԱԿԱՆԻՆ ՆԱԽԻՐԱԾ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԺՊՈՒՎԱԾՈՒ



ԱՎԱԳԵՄԻԿՈՍ  
ԷԳՎԱՐԳ ԶՐԲԱՇՅԱՆ  
100

Օրերս «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց մի ժողովածու, որտեղ ամփոփված են ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի նյութերը:

Գրքում ներկայացված են 2023 թվականի նոյեմբերի 8-10-ը կայացած հոբելյանական եռօրյա գիտաժողովի ընթացքում ընթերցված զեկուցումներն ու ելույթները: Ճիշտ է նկատում գրականագետ Ազատ Եղիազարյանը՝ գրելով. «Այս հարյուրամյա հոբելյանը Էդվարդ Ջրբաշյանի ընթերցող-

ների, աշակերտների, նրան ճանաչած բոլոր մարդկանց երախտագիտության անկեղծ տուրքն է ակադեմիկոսի գիտականի և հրաշալի մարդու հիշատակին»:

Ժողովածուն բացվում է Ավիկ Իսահակյանի սրտաբուխ խոսքով («Մարդու գործն է միշտ անմահ»)՝ նվիրված ակադ. Էդ. Ջրբաշյանի հիշատակին: «Մարդիկ կան, գրում է նա, որոնց անունը մշտապես լույս է ճառագում: Կենդանության օրոք նրանք իրենց շուրջը համախմբում են գործընկերների, համախոհների, ուսանողների, իսկ հետագայում նրանց հիշատակը հավերժացնում են գրքերը, գիտական աշխատությունները, գործն ու վաստակը»:

Շուրջ երկու տասնյակ անվանի գիտնականների և երիտասարդ գրականագետների հոդվածներ են ամփոփված գրքում, որոնց զգալի մասը նվիրված է Էդվարդ Ջրբաշյանի՝ իբրև գրականագիտության մեջ մեծագույն վաստակ ունեցող գիտնականի գնահատմանը: Այդպիսին է Ժենյա Քալանթարյանի «Էդվարդ Ջրբաշյան գրականագետը» հոդվածը: Համակողմանիորեն և առանձին ուսումնասիրություններով բնութագրված են Ջրբաշյանի գիտական գործունեության տարբեր ուղղությունները. թուրքալեզու գիտությունը ներկայացված է Ազատ Եղիազարյանի հոդվածով («Էդվարդ

Ջրբաշյանի թուրքալեզու գիտական ժառանգությունը»), տաղագիտության մեջ ունեցած ներդրումը՝ Սեփիտա Դուլիսյանի ուսումնասիրությամբ («Էդվարդ Ջրբաշյանը՝ վահան Տերյանի տաղաչափական համակարգի մեկնաբան»), գրականության տեսության ասպարեզում գիտնականի հետաքրքրությունների շրջանակը՝ Աշխեն Ջրբաշյանի «Էդվարդ Ջրբաշյանը՝ գրականության տեսաբան» հոդվածով:

Մեծ գիտնականի առավել ամբողջական կերպարը՝ իբրև մարդու, գիտնականի, գիտության կազմակերպիչ ու ղեկավարի, ներկայացված է Սուսաննա Հովհաննիսյանի «Հայ գրականագիտության ամրակուռ սյունը (դիմանկարի փորձ)» ուսումնասիրության մեջ: Առանձին ենթակետերով բացվում է մարդկային մի համակողմանի կերպար՝ «Դեկավարը», «Գիտնականը», «Տեսաբանը», «Գրականության պատմաբանը», «Թուրքալեզու գիտնականը», «Ստեղծագործողը», «Մարդը»: «Բոլոր նրանք, ովքեր ծանոթ էին Ջրբաշյան մարդուն, զգացել են նրա ներքին լույսը: Իսկ ովքեր ավելի երկար տարիներ են նրա հետ սովորել կամ աշխատել, նրա կերպարը նույնացրել են հայրենիքի կերպարին՝ ներշնչվելով նրա ազգասիրությամբ ու հայ մշակույթին նվիրվածությամբ», գրում է Ս. Հովհաննիսյանը:

Ոչ պակաս հետաքրքիր և արժեքավոր նյութ են պարունակում Էդ. Ջրբաշյանի տարբեր մասնավոր խնդիրների նվիրված ուսումնասիրություններին վերաբերող հոդվածները՝ Սամվել Մուրադյանի «Ավետիք Իսահակյանը Էդվարդ Ջրբաշյանի գնահատությամբ», Եվա Մնացականյանի «Հ. Թուրքալեզու գիտնականը» պոեմի ջրբաշյանական մեկնաբանությունը, Մագդա Ջանփոլադյանի, Սիրանուշ Մարգարյանի, Պետրոս Դեմիրճյանի և այլոց աշխատանքները: Ժողովածուում ներկայացված են նաև գիտաժողովի ընթացքում կարդացած մի շարք հետաքրքիր ու արժեքավոր զեկուցումներ, որոնք այս կամ այն չափով հենվում են մեծ գիտնականի գրականագիտական ուսումնասիրությունների վրա:

Գրքի լույսընծայումն իսկապես իրադարձություն է Հայաստանի գիտական համայնության համար: Այն ևս մեկ անգամ հավաստում է, որ մեծ գիտնականների ժառանգությունը կենսունակ է ոչ միայն իրենց ապրած տարիներին, այլև հետագա սերունդների կյանքում, որոնց համար այն կարող է մշտապես լինել ուղեմիջ և ոգեշնչման աղբյուր:

**Ալբերտ ՄԱԿԱՐՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր



ՄԵՐ ԱՆՎԱՆԻ ԳԻՏԵԼԱԿԱՆՆԵՐԸ



րանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան թոշակառու: 1961 թ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության բաժնում, սկզբում՝ կրտսեր, 1972 թվականից Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում՝ ավագ, 1995 թվականից առ այսօր Բանահյուսության տեսության և պատմության բաժնում (2024 թվականից՝ Բանագիտության բաժին)՝ որպես առաջատար գիտաշխատող: 1996-2004 թթ. միաժամանակ աշխատել է նաև ՀՀ ԳԱՀ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում: 1965 թ. պաշտպանել է թեկնածուա-

թվականից, ավելի քան 65 տարիների ընթացքում անձնական նախաձեռնությամբ և արևմտահայի արյան կանչով բառ առ բառ, պատառիկ առ պատառիկ գրառել, ծայնագրել, տեսագրել, ուսումնասիրել և հրատարակել է մեր զավթված Երկրի՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի հայաբնակ՝ ավելի քան 150 տեղավայրերից բռնի տարագրված, ապա Հայաստանում և Սփյուռքում բնակություն հաստատած Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների՝ իրենց բարբառներով հաղորդած ժողովրդական բանավոր ավանդության տարաբնույթ նշխարները, ինչպես նաև փաստավերական վկայություններն ու պատմական երգերը (հայերեն և թուրքալեզու)՝ կորստից փրկելով և տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմա-

«Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ», Ե., 2000, հայ., անգլ., Ե., 2011, թուրք., Ստամբուլ, 2013), «Մուսա Լեռան հերոսամարտը. ականատես վերապրողների վկայություններ» (հայ., անգլ., Ե., 2015), «Ռուսաստանի հայերի բանավոր ավանդույթի նշխարներ (Դոնի Ռոստով և Պյատիգորսկ)» (հայ., ռուս., անգլ., Ե., 2020), «Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովություն» (հայ., անգլ., Ե., 2021) ժողովրդական պատմական վկայությունների, բանահյուսական, ազգագրական նյութերի և գիտական ուսումնասիրությունների հատորները:

Կազմել է «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության «Արցախ-Ուտիք» (Ե., 1973), «Տարոն-Տուրուբերան» (Ե., 1984), «Վան-Վասպուրական» (Ե., 1998) հատորները, ինչպես նաև կազմել ու խմբագրել է մի շարք ժողովածուներ և աշխատություններ:

Վերծինե Սվազյանի աշխատանքների մասին Հայաստանում և արտերկրում լույս են տեսել բազմաթիվ գրախոսականներ, հանրագիտարանային և այլ հոդվածներ, ինչպես նաև նկարահանվել է ֆիլմ՝ «Սվազյան գերդաստանի հավատամքը» խորագրով: Այն նվիրված է 20-րդ դարի ընթացքում Սվազյան գերդաստանի երեք սերունդների ազգանպաստ և հայրենամասսո գործունեությանը՝ ընդգրկելով հայ ժողովրդի համար բախտորոշ մի ժամանակաշրջան:

Բազմավաստակ գիտնականն արժանացել է հայրենական և արտասահմանյան ավելի քան երեք տասնյակ պարգևների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում նշանակալից ավանդ ներդնելու համար ՀՀ նախագահի Առաջին մրցանակի և «Ոսկե հուշամեդալի» (2006), «Մովսես Խորենացի» մեդալի (2013):

Շնորհավորելով վաստակաշատ բանահավաք և բանագետ Վերծինե Սվազյանին իր 90-ամյա հոբելյանի առթիվ՝ մադբուն ենք արևշատություն և նորանոր ստեղծագործական հաջողություններ:

ՀՀ ԳԱՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱԳԵՏ-ԺՈՂՈՎՐԴԱԳԵՏԸ

(Վերծինե Սվազյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Բանագետ, բանահավաք, ժողովրդագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ (2016 թ.) Վերծինե Սվազյանը ծնվել է 1934 թ. մարտի 1-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում գրող, հասարակական գործիչ Գառնիկ Սվազյանի ընտանիքում: 1947 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Մայր Հայաստան: 1952-1956 թթ. սովորել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական բաժնում: 1956-1958 թթ. Երևանի N 52 միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում դասավանդել է հայոց լեզու և հայ գրականություն: 1958 թ. աշխատել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության բաժնում՝ որպես լաբորանտ: 1958-1961 թթ. ուսումը շարունակել է ԳԱ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Կարապետ Սելիք-Օհանջանյան): Ասպի-

կան, իսկ 1995 թ.՝ դոկտորական թեզերը: 1996-2004 թթ. եղել է ՀՀ ԳԱՀ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, իսկ 1996-2018 թթ.՝ ՀՀ ԳԱՀ հնագիտության և ազգագրության, ինչպես նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտներում գործող մասնագիտական խորհուրդների անդամ: Մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովների, ինչպես նաև՝ զեկուցել սփյուռքահայ գաղթօջախների տարբեր կազմակերպություններում (Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա)՝ հանդես գալով բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանը և հայ ժողովրդի պատմական հիշողությանն առնչվող թեմաներով: Դեղինակ է 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հրապարակումների, այդ թվում՝ շուրջ 30 գրքերի, որոնք տարբեր լեզուներով լույս են տեսել Հայաստանում և արտերկրում: Բանասիրական գիտությունների դոկտոր Վերծինե Սվազյանը, սկսած 1955

ներեն, թուրքերեն) աշխարհին ու մարդկության արդար դատին ներկայացնելով հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը: Հրատարակել է «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» (հայ. և ռուս., Ե., 1997, անգլ., Ե., 1999, թուրք., Ստամբուլ, 2005), «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» (հայ., Ե., 2003, անգլ., Ե., 2004, 2005, ֆրանս., գերմ., ռուս., թուրք., Ստամբուլ, 2005) մենագրական աշխատությունները, ինչպես նաև՝ Հայաստանին նվիրված ծավալուն հոդվածներ արտասահմանյան մի շարք հանրագիտարանների համար: Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա աշխատությունները թարգմանվել և հրատարակվել են Հայաստանում և արտերկրում նաև իսպաներեն, իհնդի, չեխերեն և այլ լեզուներով: Խոթեքավոր են Վ.Սվազյանի հրատարակած «Մուսա լեռ» (Ե., 1984), «Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը» (Ե., 1994), «Մեծ եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ» (Ե., 1995), «Պոլսահայոց բանահիւսութիւնը» (Ե., 2000),


«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻԶԱՆՅՔԻՅ» ՀԵՏՈ ԹՈՒՐԲԻԱՆ ՆՈՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ ԿԴՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ ԿԱՊՎԱԾ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

«Մեդիալարի» թղթակից Բ. Աղաբեկյանի հարցազրույցը ՀՀ ԳԱՀ ակադեմիկոս, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի հետ (13 փետրվարի, 2024 թ.)

- **Պարո՞ն Սաֆրաստյան, հայկական կողմը հայտարարեց, որ հայ-թուրքական սահմանին գտնվող Մարգարայի անցակետը պատրաստ է, և Հայաստանը կարող է ցանկացած պահի կյանքի կոչել Թուրքիայի հետ ձեռք բերված պայմանավորվածությունը: Թուրքիայից արձագանք չկա, Ձեր գնահատմամբ Թուրքիան կհամաձայնի՞ այդ պայմանավորվածությունը կյանքի կոչել:**  
- Այն, ինչ պետք է, Թուրքիան արդեն ասել է ու շարունակում է հիմնվել դրա վրա, իսկ ասել է հետևյալն ամենաբարձր մակարդակով. Հայաստանի հետ հարաբերություններում որևէ առաջընթաց չի լինի, եթե Ադրբեջանի պայմանների հիման վրա չստորագրվի պայմանագիր Հայաստանի ու Ադրբեջանի միջև: Թուրքիան հայտարարել է նաև, որ «Զանգեզուրի միջանցքը» պետք է անպայման բացվի: Այնպես որ Թուրքիան իր դիրքորոշումը պարզորոշ հայտնել է, այստեղ մեկնաբանելու խնդիր չկա, բանի որ այդ պահանջներն իրականություն չեն դարձել, Թուրքիան էլ ոչ մի քայլ չի ձեռնարկի:  
- **Այսինքն՝ այն աննշան քայլերը, որոնք ժամանակին արվեցին Թուրքիայի կողմից, բնավ էլ Հայաստանի հետ հարաբերությունների իրական կարգավորման նպատակ չունե՞ին:**  
- Դրանք նպատակ ունեին ոչ թե վերջնական կարգավորման, այլ ցույց տալ աշխարհին, որ իրենք պատրաստ են Հայաստանի հետ բանակցությունների, որ իրենք ինչ-որ բաներ են նախապատրաստել, որով-

հետև այստեղ կա մի պարզ ճշմարտություն. մենք ասում ենք՝ Թուրքիան կբացի՞, թե՞ չի բացի սահմանը. ինչո՞ւ նա պետք է այդ առիթ, եթե չի ստանում այն, ինչ ուզում է:  
- **Ստանալուց հետո կբացի՞:**  
- Հետո արդեն նոր պահանջներ կդնի Հայաստանի առաջ, մասնավորապես կապված մեր պատմական հիշողության վրա ազդելու հետ: Այն ամենը, ինչ ինքն ուզեց ասումալ Հայաստանից, այդ ժամանակ էլ կբացի սահմանը:  
- **Պարո՞ն Սաֆրաստյան, Էրդողանն ինչո՞ւ էր Ալիևին հասցեագրած շնորհավորական ուղերձում անդրադարձել նաև Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը, արդյոք Թուրքիան Ալիևի վերընտրվելուց հետո կարագացնի՞ այսպես կոչված խաղաղության պայմանագրի կնքման գործընթացը:**  
- Թուրքիան չի կարող արագացնել, Ադրբեջանն ու Հայաստանը բանակցում են, ու տեսնում ենք, որ դրանք, ըստ էության, հիմա կանգնած են, դա Թուրքիան թողել է Ադրբեջանին՝ շատ պարզ հայտարարելով, որ կանգնած է Ադրբեջանի թիկունքին, ինչ Ադրբեջանը ցանկանում է, նույնը ցանկանում է Թուրքիան: Ընդ որում, երբ ասում ենք՝ թիկունքին կանգնած է, պետք է հասկանանք, որ Թուրքիայի աջակցությունն Ադրբեջանին է՝ դիվանագիտական առումով է, և՛ ռազմական: Թուրքիան որոշիչ դեր ունի Ադրբեջանի բանակի ներկայիս սպառազինման գործընթացում, որովհետև տեսնում ենք, որ Ադրբեջանը շարունակում է զինվել,

այդ թվում նաև՝ զենք է ստանում Թուրքիայից՝ ավելի կործանարար զենքեր, քան առաջ:  
- **Ադրբեջանի նախագահի խորհրդականը հայտարարել է, թե Ադրբեջանը տարածքային պահանջներ չունի ՀՀ-ից: Ձեր կարծիքով սա իրականությանը համապատասխանո՞ւմ է, թե՞ լոկ հայտարարություն է:**  
- Ադրբեջանն ուժեղացնում է իր բանակը, բազմաթիվ զորավարություններ են անցկացվում, սա գործընթաց է, որն Ադրբեջանում շարունակվում է: Ժամանակ առ ժամանակ հայտարարում են, թե տարածքային պահանջ չունեն Հայաստանից, սակայն Ադրբեջանի նախագահի հայտարարությունները հակառակն են վկայում: Իսկ ինչո՞ւ են այս ժամանակ նման հայտարարություններ հնչեցնում, որովհետև Ադրբեջանը զգում է, որ իր վրա կա ճնշում, դրա համար էլ փորձում է մանևրել ու նման հայտարարություններ անել, բայց փաստն այն է, որ Ադրբեջանը շարունակում է իր բանակը հզորացնել:  
- **Ադրբեջանը հստակ հայտարարել է, թե խնդիր է տեսնում ՀՀ Սահմանադրության որոշ կետերի և ոչ միայն այդ փաստաթղթի մեջ, եթե հայկական կողմն այդ պահանջները կատարի, Ադրբեջանն ուրիշ պահանջներ չի՞ ներկայացնի Հայաստանին:**  
- Չեն կարող ասել, թե նրանք ինչքան հեռու կգնան, բայց այն, ինչ հիմա տեսնում ենք, փաստում է, որ Ադրբեջանն աստիճանաբար իր պահանջները Հայաստանի



նկատմամբ ավելի է ընդլայնում, ծանր պահանջներ է ներկայացնում, ճնշումն ավելի է ուժեղացնում:

- **Այս փաստաթղթերի նկատմամբ հնչեցված պահանջները բխում են ձեր ասած՝ մեր պատմական հիշողության վրա ազդելու համատեքստի՞ց, պարո՞ն Սաֆրաստյան:**  
- Թուրքիայի համար դա Ցեղասպանության խնդիրն է, որը, համոզված եմ, որոշակի փուլում մեր առջև կդրվի: Իսկ Ադրբեջանի պահանջները կապված են ոչ միայն պատմական հիշողության հետ, որ փորձում է յուրացնել հազարամյակների մեր ժառանգությունը, այլև գործում է. Արցախը հայաթափեց, ՀՀ-ից տարածքներ է գրավել, նոր պահանջներ է ներկայացնում:

Աշխատանքի բաժանում է տեղի ունենում Թուրքիայի ու Ադրբեջանի միջև, մենք ենթարկվում ենք այդ երկու կողմի ճնշումներին, բայց ես հույս ունեմ, որ մեր ժողովուրդն այս ճնշումներին չի ենթարկվի, ես միշտ լավատես եմ:



ՄՏ-ՔԵՐԻ ՀԱՐԹ-ԱԿ

ԵՐԲ ՀՈԳԻԴ ՏՆՔՈՒՄ Է ՑԱՎԻՑ



Տեական ժամանակ այնպիսի զգացողություն է՝ ասես մենք, մի ամբողջ ժողովուրդ, անհայտ ուղղությամբ գնացող գնացքի մեջ ենք, իսկ գնացքը՝ թունելի մեջ. թունելի ծայրը չի երևում, իսկ պատերը հիմնավոր խախտու են և կարող են ամեն րոպե փլվել ու տակով անել այն գնացքը, որի մեջ մենք ենք՝ ազգովի:

Ահավոր հիասթափված աշխարհից ու մեզանից՝ հիմա են հասկանում, որ մենք չենք պայքարել հանուն լավի, հանուն բարգավաճման, հանուն հզորացման: Մենք պայքարել ենք հանուն գոյատևման... միայն: Հարմարվել ենք, հանդուրժել ենք, պայքարել ենք, որ չվերանանք... որովհետև գերխնդիր չի եղել, գաղափարախոսություն չի եղել, ընդամենը պահի կարծածամկետ խնդիր է դրվել... էս պահին ոնց փրկվենք: Իսկ հետո՞... հետոյի տերն էլ՝ Աստված:

Ի դեպ, հասկացա մաս, որ պահի համար գործելն ազգային նկարագիր է, ու դրա համար էլ կորցնում ենք ու կորցնում ենք... դարեր շարունակ. ամուրը դրել ենք ճակատագիր, մե՞զ ենք միփթարում:

Մենք անկախություն ստացանք... երազում էինք, չէ՞: Մենք հաղթանակ ունեցանք, մենք ինչ-որ հրաշքով հետ բերեցինք մեր կորցրած հայրենիքի մի փոքր կտորը: Հետո ի՞նչ արեցինք... սկսեցինք արագությամբ անխնայ թալանել ու քանդել մեր երկիրը, մեր սեփական երկիրը, մոռացանք հաղթանակը, հերոսն անտեսվեց, կրթությունը մնաց սեփական տան պարսպից դուրս: Պետք էր լավ ապրել, պահի թելադրանքն էր՝ բարեկեցիկ, շռայլ, ու... անտեսեցինք ապագայի գաղափարն ընդհանրապես, հիմնավոր:

Հետո հանկարծ 2018-ին հրապարակի հարթակում հայտնվեց արդարությունից խոսող մեկը... Լավ էր խոսում, մեր սրտից... Իսկ ո՞վ էր այդ մեկը... չմտածեցինք, չխորացանք... լավ էր խոսում, մա պայծառ ապագա էր խոս-

տանում: Ու ժողովուրդը աչքերը փակ գնաց նրա հետևից... իսկ եթե խաբո՞ւմ էր...

Իսկ ապագան չուշացավ, եկավ դաժան, անխնայ, խլեց մեր հաղթանակը, մեր արժանապատվությունը, մեր հավատը, մեր պատրանքները... Մենք մնացինք մենակ, բոքիկ ու մերկ, հիասթափված ու անպաշտպան: Իսկ ամենասարսափելին, որն այս նոր իշխանությունների «նվերն» էր մեզ, անմիաբան, չարացած մի ժողովուրդ դարձանք, որ մոռացավ թե՛ հաղթանակը, թե՛ հանուն այդ հաղթանակի թափված արյունը, թե՛ հավաքական ուժի արժեքը, որ հաղթանակ էր բերել:

Հիմա մենք մի ժողովուրդ ենք, որ, ատելության մեջ խեղդված, չգիտի՝ ինչ է ուզում և ուր է գնում:

Հետո՞... Հետո մինչև կրակը հասնի մեզ, ու դարձյալ ազգի լավագույն հատվածին դնենք փրկության զոհասեղանին, որ գուցե գոյատևենք... Որ էլի շարունակենք քարշ գալով ապրել, ավելի փոքրացած, ավելի նվաստացած, ավելի տառապած ու աշխարհից խռոված:

Մինչև ե՞րբ, չգիտեն: Գուցե հավե՞րժ...

Մինչև հասկանանք, որ սա արդեն ճակատագիր չէ, այլ ազգային նկարագիր: Գիտակցենք, որ ազգային միասնություն է պետք, ազգային գաղափարախոսություն: Մենք մշտապես հոսանքին հակառակ ենք գնում, որովհետև յուրաքանչյուր ժողովուրդ գնում է սեփական շահի հետևից, իր աշխարհաբաղադրական շահի, իր բարոյության, իր զարգացման, իր բարեկեցության: Իսկ մե՞նք... հանուն սեփական բարեկեցության, կստացվի՞ լավ, չի ստացվի՞ կգնա ուրիշ երկիր, որտեղ գուցե ավելի լավ լինի: Իսկ Հայրենիքը...

Աշխարհի նոր բաժանում է: Աշխարհի հզորները փորձում են կիսել աշխարհը: Ու ի՞նչ ենք անում մենք: Մենք պարտված, հուսախաբ, մաս անտարբեր, մաս անմիաբան ու չարացած, մաս մտահոգ ու դառնացած սպասում ենք... չեն հասկանում՝ ո՞ւմ, ի՞նչի՞, գուցե ենթագիտակցորեն սպասում ենք ազգային առաջնորդի՞, որն այդպես էլ չի հայտնվում, թե՛ սպասում ենք հովանավորի, բայց ոչ մի կերպ չենք կողմնորոշվում՝ ո՞ր աշխարհից:

Այսինքն՝ ի՞նչ է ստացվում. մենք դարձյալ համաձայն ենք կուչ գալ ինչ-որ մեկի թևի տակ, որ գոյատևե՞նք: Փաստորեն, այո: Այո, որովհետև 30 տարի մեր սարքած տունը թոթոց էր, որ միանգամից այրվեց, փոշիացավ, ու մեզ բաժին հասավ մոխիրը: Որովհետև մենք չհասկացանք ու հիմա էլ չենք հասկանում, որ Հայրենիքը խմանել ու փայփայել է պետք, որ անկախությունը չէր նշանակում զգայական պահի տակ անկապ մի հիմն որդեգրել ու արագությամբ սեփական երկիրը հարամել, որովհետև չհասկացանք ու հիմա էլ չենք հասկանում, որ մենք պարտավո-

րություն ունենք հանուն հաղթանակի զոհվածների ու սերունդների հանդեպ, որովհետև չենք հասկանում, որ թուրքի հարևան ենք, որը երբևէ չի մարդանալու, որ եղպես էլ չհասկացանք, որ Աստծուն ապավինելուց առաջ պետք է Աստծո օրենքներով ապրել...

Կարճ ասած՝ մենք ընդամենը մի պուճուր ու անբախտ աշխարհ ենք այս մեծ ու զազան աշխարհում:

Հիմա կոտրած տաշտակի առաջ ենք: Հասկանո՞ւմ ենք. իհարկե, ոչ: Փորձո՞ւմ ենք ինչ-որ բան անել. իհարկե, ոչ: Անհատական պետական մտածողության գրոյական վիճակ: Հիմա ապավինում ենք Աստծուն... միայն. բայց դա բոլորովին էլ հավատք չէ, այլ սեփական ուժերի վրա չիենվելու փաստ, թուլություն ու անկարողություն՝ ընդամենը:

Եվ այսօր մի մեծ հարցական կախված է գլխներիս. ի՞նչ պետք է անի անպաշտպան, վիրավոր, կուչ եկած մի ժողովուրդ, որ ոչ առաջնորդ ունի, ոչ ապագայի տեսլական:

Իսկ մեր երկրի «ղեկավարը» եվրոպաներում պաշտոնապես հայտարարեց, որ Արցախը Ադրբեյջանի մաս է... Ի՞նչ ասես: Արսուրդի թատրոնը զլուխը պատին է տվել...

20.09.2023. Մենք Արցախը կորցրինք...

Ասում ենք՝ ո՞նց է եղեմը եղել... էսպես՝ էս անբարո աշխարհի աչքի առաջ ու թողությունամբ...

Հոգուդ ցավն ու անմարդկային մոլորոցը ո՞նց բառերով նկարագրես...

Փաստորեն մեր անկախ Հայաստանի բոլոր ղեկավարները՝ իրենց անհայրենիք եությամբ, փուչ ինքնավստահությամբ, իրար չհանդուրժելու մոլուցքով, թալանին տեր կանգնելով, իսկ վերջին չարիքը մաս իր տգետ, երկակի խաղերով, զոր դիվանագիտությամբ ու ստի անսպառ պաշարով կործանեցին Արցախը...

35 տարի միտինգներում քարշ գալով, մութն ու ցուրտը հաղթահարելով, ցավի, տառապանքի ու սպասումի մեջ կյանքը մաշելով, կորուստդ սգալով՝ դիմանաս, որ... Փաստորեն Արցախյան շարժումից ու հաղթանակից հետո մեզ մնաց միայն եռաբլուրը...

Այսօր էլ, ինչպես տարիներ շարունակ, հարցերը տանջում են. արդյոք երբևէ կխաղաղվի՞՝ ցավից կքված մեր տանջահար ու խեղված հոգին, արդյոք երբևէ ազգովի կհասկանա՞նք, որ պարտք ենք մեր անքանակ մատաղ գոհերին, արդյոք կսթափվե՞նք ու կհասկանա՞նք, որ բավական է դարեդար մի կերպ գոյատևել, արդյոք կորոշե՞նք վերջապես արժանապատիվ ու մարդավայել ապրել:

Ես իմ Հայաստան աշխարհի զավակն եմ, որ անմորմալ բաց նյարդերով է սիրում իր երկիրը... Ու հիմա ծնկներս ծավլում են անգործությունից:

Լիլիթ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ  
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՄԵՐԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿԻՆ ՀԱՅԿԱԿՆ ՀԱՐՅԻ ՄԱՍԻՆ  
(ԾԵՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻԿ)

XX դարի 10-ական թվականների երկրորդ կեսի հայ իրականության բազմազան կողմերի լուսաբանման ու գնահատման, նոր փաստերի, մանրամասների վերհանման գործում անգնահատելի ներդրում ունի ռուս անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին (1884-1967): Գործելով և ապրելով մախ Արևմտյան Հայաստանում, ապա՝ Անդրկովկասում (1916-1921 թթ.)՝ նա ակնդետ հետևում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, երկրի ներքին ու արտաքին դրությանը և իր հուժկու ծայրը բարձրացնում հանուն հայ ժողովրդի արդար պայքարի ու գոյության իրավունքի:

Բացի գրական բազմաթիվ գործերից, ռուս բանաստեղծը հայ ժողովրդի, Հայաստանի, Հայկական հարցի մասին 1918-1919 թթ. գրել է հրապարակախոսական տասնյակ հոդվածներ: Խոսում են դրանց վերնագրերը («Պատասխան Հովհաննես Թումանյանին», «Ժամգոտված գրիչներ», «Pro Armenia», «Նոր վերք», «Կենդանի գերեզմանոց», «Պսակ ընկերներիս», «Հայաստանի աղետները», «Ղարաբաղ», «Վերջին ճիչը», «Վերակենդանացող քաղաքը» և այլն), լավատեսական, իմաստալից ու կենսահաստատ՝ եզրահանգումները: Նա հավատում էր հայության վերածնությանը և հայ ժողովրդին ուղղում էր հուսադրող, քաջալերիչ խոսքեր:

Ս. Գորոդեցկին ոչ միայն հոդվածներ է գրել, այլև մի շարք հրապարակային ելույթներ է ունեցել հայ ժողովրդի, Հայաստանի և Հայկական հարցի շուրջ: Այսպես, 1919 թ. հուլիսի կեսերին ռուս բանաստեղծը Բաթումիում հանդես է եկել «Հայկական հարցի» մասին ուշագրավ գեկուցումով: Դասախոսության մասին տեղեկանում ենք Թիֆլիսում հրատարակվող «Նոր աշխատավոր»

թերթի հաղորդագրությունից (22. VII. 1919)՝ «Սերգեյ Գորոդեցկու դասախոսությունը Հայկական հարցի մասին» վերնագրով և «Բաթումի, հուլիսի 15» նշումով: Այդ հաղորդագրությունը շարադրված է այնքան պարզ ու ըմբռնելի, որ անգամ մեկնաբանության կարիք չկա, ուստի այն բերենք ամբողջությամբ, որից, կարծում ենք, ընթերցողը կարող է եզրակացություն կատարել և պատկերացում կազմել Հայաստանի վերաբերյալ Գորոդեցկու տեղեկացվածության աստիճանի մասին: Ահա այն.

«Հասարակական ժողովարանի դահլիճում երեկ՝ հուլիսի 14-ին, ռուս բանաստեղծ և գեղարվեստագետ Սերգեյ Գորոդեցկին դասախոսեց «Հայկական հարցի» մասին հետևյալ ծրագրով.

- Ընդունա՞լ է հայ ազգը ինքնուրույն գոյության:
- Հայաստանի երկու մասերի՝ Ռուսաստանի և Տաճկաստանի, միացման անհրաժեշտությունը մի պետություն կազմելու համար:
- Հմարավո՞ր է խաղաղ բնակչություն ստեղծել հայ ժողովրդի և մուսուլման աշխարհի հետ:
- Գյուղատնտեսություն և առևտրաարդյունաբերություն: Ժողովրդական գեղարվեստ և գրական գեղարվեստ:
- Կուլտուրական կապ Ռուսաստանի հետ:
- Եվրոպական պետությունների հովանավորությունների վնասը և օգուտը:
- Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատանքը:
- Ազգի ֆիզիկական գոյության ու ազատության հոգսերը: Գաղթականական խնդիր:
- Դպրոց: Մանուկների դաստիարակություն: Ազգայնացում և նրա ծայրահեղությունը:

Դասախոսը մախ շեշտեց, որ Հայկական հարցը խղճի հարց է: Պատմությունն էլ միշտ անարդարացի է եղել: Ակնարկ ձգելով ազգերի վերածնության հարցի վրա և ապա համեմատելով ռուսահայերի և տաճկահայերի կուլտուրական ստեղծագործական աշխատանքները թե՛ անցյալում և թե՛ ներկայում, եզրակացրեց, որ, այո՞, հայերը՝ որպես կուլտուրական ազգ, կարող են ինքնուրույն գոյություն ունենալ և երկու հատվածները միացրած կազմել մի անկախ պետություն:

Անցնելով մյուս հարցին՝ թե հնարավո՞ր է արդյոք խաղաղ բնակչություն ստեղծել հայ ժողովրդի և մուսուլմանների միջև և բերելով մի քանի փաստեր՝ պարզեց, որ եթե Պուլսից և Բեռլինից մղված պրովոկացիաները մեջտեղից չեզոքացվեն որպես արտաքին երևույթ, հնարավոր է երկու աշխատավոր ժողովուրդը իրար հետ հաշտ ապրեցնել:

Գյուղատնտեսության և առևտրաարդյունաբերության մասին նկատեց, որ ներկայումս այն, ինչ որ կատարում է Երևանը Շարուրի ամբերրիի հողերը ոռոգելու մախագծով, որի համար հայկական կառավարությունը արժանի է գովեստի... Խոսելով հայ ժողովրդական բանահյուսության և գեղեցիկ գրականության մասին և կարդալով Դ. Վարուժանից ու Հովհ. Թումանյանից մեղաներ՝ նկատեց, որ նման բանաստեղծությունները հանճարի արդյունք են, և Վարուժանին դասեց Մետերլինկի հետ մույն շարքում:

Եվրոպական որևէ պետության հովանավորության պարագայում կարծում է, որ Հայաստանի, հայ ժողովրդի ներքին ստեղծագործական և նրա ճարտարապետական հասկացողությունը մույնսովյալ կշարունակվի առանց ուժեղ ազդեցությունների: Երևանի կառավարությունը մեծ եռանդ է ցույց տալիս և մեծ մախածնություններ



րի է դիմել: Նրա ներկայիս վարչապետ Ալ. Խատիսյանը մեծ շնորհի տեր և դիպլոմատ մարդ է: Հազարավոր գաղթականությունը շատ հոգսեր է խլում: Դպրոցի և մանուկների դաստիարակության գործերը հետզհետե ցանկալի ուղղության վրա են դրվում: Ազգայնացումն անհրաժեշտ էր գտնում, բնական պետք է լինի, սակայն այդ հողի վրա մի քանի պակասավոր երևույթ ինքը նկատել է, որը կարծում է՝ հեշտ կշտկվի...»:

Ի դեպ, մամուլի հաղորդումով, այդ գեկուցումը Հայկական ակումբը պլանավորել էր կազմակերպել մաս Տրապիզոնում:

Իր հայամապատ գործունեությամբ և Հայկական հարցին նվիրված հրապարակային այդ ելույթով Սերգեյ Գորոդեցկին մեր առջև հանում է իբրև ռուս ժողովրդի խիղճ: Խիղճ, որի հետ երբեք գործարքի չգնաց, և դա այն ժամանակ, երբ, ինչպես այսօր ևս, ամեն ինչ քաղաքականացված էր:

Անուշական ՉԱԲԱՐՅԱՆ  
Բանասիրական գիտությունների  
դոկտոր, «Պատմաբանասիրական  
հանդես»-ի գլխավոր խմբագիր

## ԿԻՊՐՈՍՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսանողական ծնեռային արձակուրդի օրերն անցկացրի Կիպրոսում: Վարձած մեքենայով, որը վարում էր աղջիկս, շրջեցի՝ Կիպրոսի հունական մասում, որը կազմում է կղզու տարածքի 60 տոկոսը: Բնակվում էինք Լառնակա քաղաքի կենտրոնում գտնվող փոքրիկ, հարմարավետ հյուրանոցում: Պետք է հասցնեի՝ հնարավորինս պատմական շատ վայրեր տեսնել: Առաջին հերթին այն պատմական հուշարձանները, որոնք գտնվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորության ներքո:

Մեծ ցանկություն ունեինք մաս ծանոթանալու հայկական դպրոցին, այցելելու Լառնակայի հայկական եկեղեցի ու ամպայման ծաղիկներ դնելու հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը հավերժացնող հուշակոթողին:

Եղեռնի հուշարձանը գտնվում է քաղաքի ամենաառաջին Մարինա ծովափնյա փողոցի կենտրոնում: Այն մուգ կարմրագույն գրանիտից կառուցված համալիր է, կենտրոնում՝ աբստրակտ ոճով կերտված հուշարձանը: Պատվանդանի վրա անգլերեն, հունարեն, հայերեն ու թուրքերեն գրված է. «Այս հուշարձանը վեր է խոյանում այն վայրում, ուր 1915 թվականի ցեղասպանության կոտորածներից մազապուրծ հազարավոր հայեր առաջին անգամ ոտք դրեցին Կիպրոս: Այն արտահայտում է հայ ազգի երախտագիտությունը Կիպրոսի ժողովրդին իր բարեսրտության և օգնության համար, այս հուշարձանը հավերժացնում է Մեծ եղեռնի անթիվ նահատակների հիշատակը»:

Հայկական եկեղեցին բաց էր միայն շաբաթ օրը: Հանդիպեցի՝ վանահորը, որը մեզ հավաստիացրեց, թե Կիպրոսում ապրող բոլոր հայերը խոսում են հայերեն, հայերեն գրել-կարդալ գիտեն, ու եկեղեցու բոլոր արարողությունները հայերեն են: Եկեղեցին Լառնակայի կենտրոնում է՝ Հայկական եկեղեցի կոչվող փողոցի վրա, իսկ նրա բակում՝ Նաբեկ կիրակնօրյա հայկական դպրոցի բարեկարգ շենքն է:

Ընդհանրապես Կիպրոսում հայերի նկատմամբ կար հատուկ հարգանք: Այդ օրերին հանդիպեցի՝ երեք տեղացի հայ տղամարդկանց, որոնք, լսելով մեր հայերեն խոսակցությունը, հետաքրքրվեցին, թե որտեղից ենք: Նրանք երեքն էլ շատ ներկայանալի տեսք ունեցող տղամարդիկ էին ու հատուկ ջերմություն ունեին դեպի Երևանը:

Ամենամեծ ամրոցը՝ հենց ծովափին, կապվում է Կիպրոսի Լուսինյան թագավորական ընտանիքի հետ: Ընդհանրապես XIV-XV դարերում Կիպրոսը պատկանել է Լուսինյաններին, և տարբեր վայրերում կան մի շարք մատուռներ՝ նվիրված նրանց: Նշվում է նաև, որ Լուսինյանները եղել են մաս Կիլիկյան Հայաստանի թագավորներ:

Եղանք մի շաբթ եկեղեցիներում: Լառնակայի ճշմարտվոր եկեղեցին կապվում է Սուրբ Ղազարոսի անվան հետ և տիպիկ հունական եկեղեցի է: Հնագիտական շատ կարևոր վայր է նաև Կուրիոնը, որը Լառնակայից բավա-



կանին հեռու է:

Երկրորդ առավել տպավորիչ հնավայրը գտնվում էր Պաֆոս քաղաքի մոտ: Հնավայրի պալատի հատակը պատված է եղել խճանկարով: Որոշ հատվածներում չքնաղ խճանկարները հիմնալի պահպանված են: Չմեռը Կիպրոսում զբոսաշրջության ժամանակ չէ, բայց և այնպես հնավայրերում հանդիպում էինք Եվրոպայից եկած սակավաթիվ տուրիստներին:

Կիպրոսը լեռնային երկիր է, ծնածնը կղզին կանաչի ու ծաղկունքի մեջ է: Մենք մեքենայով անցանք հունական Կիպրոսի բոլոր կողմերով: Մեր անցած գյուղերն ավելի շուտ նման էին քաղաքատիպ ավանների: Լեռնային որոշ գյուղերում կային նշանավոր վանքեր: Շատ հետաքրքիր էր Մինաս կանանց մենաստանը, որը շատ խնամված էր: Մենաստանի բակում կային պտղատու ծառեր, և մի հրաշք պամելոյի ծառ՝ ծանրաբեռ հսկա առատ պտուղներով: Շատ արևադարձային ու մերձարևադարձային երկրներում են եղել, սակայն պամելոյի ծառ տեսնում էի առաջին անգամ: Ինձ թվաց, թե հեքիաթում են:

Չափազանց հետաքրքիր վանական համալիր էր Կիկոսը, որը նույնպես գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Այն ուներ շատ հարուստ թանգարան: Այդ թանգարանը եզակի է ու ներկայացնում է Կիպրոսի ողջ պատմական մշակույթը: Թանգարանի եզակի ցուցանմուշները ներկայացվում են հատուկ լուսավորությամբ, մաս հին բյուզանդական երաժշտության ուղեկցությամբ: Այդ թանգարանը հստակ ներկայացնում է Կիպրոսի մշակույթը բյուզանդա-

կան ու հետքուզանդական ժամանակահատվածում:

Գնացի՞նք մաս որոշ հին վանքեր, որոնք լեռների վրա էին, ինչպես Կիկոսն է, լեռան կատարին: Այդ բոլոր վանքերը լեռներում թվով տասն են, ու բոլորը գտնվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Դրանցից մեկը հատկապես ներկայացնում էր հունական եկեղեցական արվեստը XI-XV դարերում:

Կային գյուղեր, որոնց տները, թվում էր, թե կախված են օդից, որովհետև կառուցված էին լեռան խիստ թեքության վրա: Ջրոսաշրջության եռուն շրջանում այդ գյուղերում շատ այցելուներ են լինում, ինչի վկայությունն էր հյուրանոցների ու մեծաքանակ սրճարանների և ռեստորանների առկայությունը: Անգլերենով խոսում էին շատերը, որովհետև մինչև անկախացումը Կիպրոսը եղել է Միացյալ Թագավորության գաղութը:

Ժամանակակից ոճով կառուցված շատ գեղեցիկ ու շքեղ քաղաք է Լիմասոլը, որը երկրի ամենակարևոր հանգստյան գոտին է:

Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիան կոչվում է մաս Լեֆկոսիա: Այն շատ տխուր տեսք ունի: Բաժանված էր հունական ու թուրքական մասերի, ու հունական մասում շատ թուրքեր կային, որոնք իրենց զգում էին արտոնյալ: Կիպրոսի քարտեզի վրա, որ հրատարակել են հույները, երկրի թուրքական մասի վրա գրված է «Area under Turkish Occupation since 1974» («Թուրքական նվաճման տակ գտնվող շրջան՝ 1974-ից»):

Թուրքական մասում կան բազմաթիվ քրիստոնեական հնություններ, սակայն Հայաստանի անձնագրով չես կարող անցնել անգլիացիների զինվորական ուժով հսկվող սահմանը: Անհրաժեշտ է ունենալ Թուրքիա մտնելու արտոնագիր:

Մի երևույթ խիստ ազդել էր մեզ վրա: Երբ մոտենում էինք Նիկոսիա մայրաքաղաքին, լեռան վրա հսկայական չափերով Թուրքիայի դրոշմ էր: Գիշերը, երբ մենք վերադառնում էինք Լառնակա, այդ հսկա դրոշմը լուսավորվում էր տարբեր գույնի լույսերով: Հասկանալի էր, թե ինչու էին հունական մասի բնակիչները ճնշված:

Կիպրոսը Հայաստանի հետ բարեկամական ջերմ հարաբերություններ ունեցող երկրների առաջին շարքում է: Այստեղ մշտապես զգալի է եղել տեղի հայ համայնքի ներկայացվածությունը երկրի հասարակական և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում:

Միջերկրական ծովի երրորդ ամենամեծ և ամենախիտ բնակեցված այդ կղզին բավականաչափ հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով և բնության հրաշագեղ անկյուններով: Կիպրոսում անցկացրած կարճ ժամանակահատվածում, բնականաբար, հնարավոր չէր լիարժեք վայելել հունական այդ դրախտավայրի ողջ հմայքը:

**Ալեխտա ԴՈՒՈՒՄԱՆՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**

### ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում ստեղծվել են սեյսմիկ մշտադիտարկման ժամանակակից ցանց և հաշվողական կենտրոն

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում ստեղծվել են սեյսմիկ մշտադիտարկման ժամանակակից ցանց և հաշվողական կենտրոն «Սեյսմիկ ցանցի ընդարձակում Կովկասում և Կենտրոնական Ասիայում» (SNECCA) ծրագրի շրջանակում: Տեղադրվել է 8 սեյսմիկ կայան Սյունիքի մարզի Աղվանի, Կոտայքի մարզի Արզական, Արմավիրի մարզի Լեռնագոգ, Լոռու մարզի Շամուտ, Գեղարքունիքի մարզի Թթուջուր, Շիրակի մարզի Ջարիշատ, Վայոց ձորի մարզի Խաչիկ և Սևաժայա բնակավայրերում:

Մշտադիտարկման ցանցի ներկայացումը և հաշվողական կենտրոնի բացումը տեղի ունեցան սույն թվականի փետրվարի 20-ին: Ողջունելով միջոցառման մաս-




նակիցներին՝ ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարտուղար, ակադեմիկոս Լևոն Թավադյանը նշեց, որ սեյսմաբանությունը Հայաստանի համար միշտ լինելու է առաջնային գիտական ուղղություն: «Սեյսմաբանությունը մեկ երկրի խնդիր չէ, և այս ոլորտում շատ կարևոր են միջազգային համագործակցությունը և մասնակցությունը համապատասխան ծրագրերի իրականացմանը», - ասաց ակադեմիկոս Թավադյանը:

«Կովկասի և Միջին Ասիայի երկրներում հայկական թիմն առաջինն ավարտեց սեյսմիկ կայանների տեղադ-

րումը և ցանցի ստեղծման աշխատանքները: Նոր ցանցը ստեղծվել է Սեյսմաբանական միացյալ հետազոտական ինստիտուտների (IRIS) պահանջներին համապատասխան: IRIS-ի հետ մեր ցանցը կատարում է տվյալների փոխանակում: Ես վստահ եմ, որ այս նոր ցանցը կգեներացնի բարձր մակարդակի գիտական և կիրառական արդյունքներ, կնպաստի Հայաստանում սեյսմաբանության և հարակից գիտությունների դիմանիկ զարգացմանը և սեյսմիկ վտանգի աղեկված գնահատմանը», - ասաց ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեյանը:

«Սեյսմիկ ցանցի ընդարձակում Կովկասում և Կենտրոնական Ասիայում» (SNECCA) ծրագրի ղեկավար Հեկտոր Բաբայանը ներկայացրեց սեյսմիկ մշտադիտարկ-



ման ժամանակակից ցանցի կառուցվածքը: «Այս ցանցի հիմնական նպատակն է հավաքել գիտական տվյալներ, որոնք հետազայում կօգտագործվեն գիտական տարբեր ծրագրերի համար: Այդ տվյալները բաց են, և բոլորը կարող են օգտվել դրանցից», - նշեց Հեկտոր Բաբայանը:

Սեյսմաբանության խմբի ղեկավար Լիլիթ Սարգսյանը ներկայացրեց ցանցի տվյալների օգտագործման հնարավորությունները Հայաստանի և տարածաշրջանի գիտատեխնիկական տարաբնույթ իրմախնդիրների լուծման համար: Նա նշեց, որ այն գիտական աշխատությունները, որոնք իրականացվել են SNECCA ծրագրի շրջանակներում, ներկայացվել են միջազգային գիտաժողովներում, 6 աշխատություն տպագրվել է միջազգային, իսկ 7-ը՝ տեղական պարբերականներում: Հիմնվելով ցանցի տվյալների վրա՝ Հայաստանում 3 ասպիրանտ պաշտպանել է թեկնածուական, 5 ուսանող՝ մագիստրոսական աշխատանքներ, և մեկ ուսանող թափվանի Սինկայի ակադեմիայից իրականացրել է հետթեկնածուական (PostDoc) հետազոտություններ:

«Սեյսմիկ ցանցի ընդարձակում Կովկասում և Կենտրոնական Ասիայում» (SNECCA) ծրագիրն իրականացվում է ԱՄՆ-ի Էներգետիկայի դեպարտամենտի (US DOE) ֆինանսավորմամբ՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) գործընկերային նախագծի միջոցով:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



Պարույր Սևակը (1924-1971) ապրեց և ստեղծագործեց խորհրդային տարիներին, հրատարակեց բանաստեղծությունների և պոեմների յոթ ժողովածու, «Սայաթ-Նովա» (1969) մենագրությունը, ստեղծեց արվեստի տեսության իր սկզբունքները և արժանավոր տեղ գրավեց ժամանակի գրականության, հետո արդեն՝ գրականության պատմության մեջ: Նրա ստեղծագործական ճանապարհը խորհրդային գրողի ճանապարհ է, որը մի կողմից ձևավորվում էր կուսակցական որոշումների պաշտոնական պահանջներով, մյուս կողմից՝ գրողի ինքնությանը, որոնց ամփոփափելի բախումը գրողի համար ավարտվում էր ճակատագրական դատավճռով՝ գրքի արգելափակում, հալածանք, կալանք կամ վտարանդիություն: Այս տեսակետից Սևակի կարապի երգը «Եղիցի լույս» (1969/1971) ժողովածուն էր, որը գաղափարական բաց ընդվզում էր երկրի առաջընթացը կասեցնող ամեն տեսակի պահպանողականության և հետամնացության դեմ: Այդ իսկ պատճառով գրքի պատրաստի 25.000 տպաքանակը 1969-ին արգելափակվեց և որոշ կրճատումներից հետո վաճառքի հանվեց բանաստեղծի ողբերգական մահից հետո՝ 1971 թ. նոյեմբերին: Սևակի կյանքի և գործունեության 1951-1959 թվականներն անցել են Մոսկվայում: Բանաստեղծությունները ռուսերեն թարգմանվել ու տպագրվել են 1952 թ.՝ «Поэты Армении», «Новый мир» (N 6): Իսկ 1953-ին լույս տեսավ «Անհաշտ մտերմություն» պոեմը «Друзья из Советашена» վերնագրով, որը ռուսերեն էին թարգմանել Վերա Զվյագինցևան և Լև Լենկովսկին: Հետագա տարիներին ռուսերեն հրատարակել է ոչ միայն առանձին բանաստեղծություններ ու շարքեր, այլև գրքեր՝ «Стихи» (1956), «Человек на ладони» (1960), «Вернасть» (1962): Սևակի պոեզիան թարգմանվել և տպագրվել է նաև հունգարերեն՝ «Անձրևային սոնետ» (Բուդապեշտ, 1966): Նրա բանաստեղծությունների «Զեռքեր» ժողովածուն լույս է տեսնում լատիշերեն (Ռիգա, 1968): Հետմահու հրատարակություններ

րից հիշենք միայն Լուդմիլա Մոստալովայի թարգմանությամբ չեխերեն լույս տեսած «Հիմն լույսին» (Պրահա, 1972) և Կարիկ Պասմանյանի անգլերեն թարգմանությամբ «Բանաստեղծությունների ժողովածու» (Երուսաղեմ, 1973) գրքերը, որոնք դեռևս կրում էին նրա կենդանի շունչը: Նրա ամուլը հնչել էր վաթսուականների համամիութենական պոեզիայում, որի ուղիները տարբեր միջոցներով ճշտում էին Եվգենի Եվտուշենկոն, Ռոբերտ Ռոժդեստվենսկին, Անդրեյ Վոզնեսենսկին, Էդուարդաս Մեծելայտիսը, Բուլատ Օկուջավան, Իվան Դրաչը, քիչ ավելի ուշ՝ Վլադիմիր Վիսոցկին, Իոսիֆ Բրոդսկին և ուրիշներ: Գրական այս միջավայրում տիրականորեն իշխում են վաթսուականների գեղարվեստական մտածողությանը նախորդող երկրի ներսում, ապա՝ վտարանդիությունից հետո, երկրից դուրս ձև ու բովանդակություն հաղորդող Ալեքսանդր Սոլժենիցինի անունն ու գործը: Սևակը ճանաչված ու գնահատված էր գրական այս միջավայրում. ինքը թարգմանում էր նրանց, նրանք՝ իրեն: Թարգմանել է Ռոժդեստվենսկու «Ռեքվիեմ» պոեմը (1966): Առավել սերտ էր Սևակի ստեղծագործական կապը Եվտուշենկոյի հետ: Ծանոթացել էին Մոսկվայում: Եվտուշենկոն թարգմանեց նրա «Ուշացած իմ սեր» պոեմը, որը «Трудный разговор» վերնագրով տպագրվեց ռուսերեն («Новый мир», 1956, թիվ 6) և դարձավ լայն քննարկման նյութ: Հոլովվում էին հետամուսնական սիրո, նոր ընտանիք կազմելու խնդրահարույց հարցերը, որոնց տարբեր դիրքերից անդրադարձան նույն «Новый мир» 1956, թիվ 10) ամսագիրը, ինչպես նաև «Комсомолецкя правда»-ն (1956, 3 նոյեմբերի), «Литературная газета»-ն (1956, 27 նոյեմբերի), «Молодая гвардия»-ն (1957, թիվ 1) և այլ պարբերականներ: Այս ամենով Սևակի պոեմը դարձավ համամիութենական քննարկման առարկա, որով փորձեցին պատասխան որոնել սեր, ժամանակ, ընտանիք խորապես անձնական հարցերին: Այսպիսի ընդգրկմամբ ու պատասխանատվությամբ հայ գրողի ոչ մի գրական երկ դեռևս համամիութենական ասպարեզում չէր շրջանառվել: Համեմատության լավագույն օրինակ է Սևակի «Պարապություն» (առանց թվագրության գետեղված է «Եղիցի լույս» գրքում) և Վիսոցկու «Զիեր» (գրել է 1971-1972 թթ.) բանաստեղծությունների զուգորդությունը: Ժամանակային հաջորդականության սկզբում Սևակն է, բայց խոսքն ամենևին այդ մասին չէ, այլ այն մասին, թե ինչպես է ժամանակի համընդհանուր դժգոհությունը միևնույն գեղարվեստական

խորհրդանշաններով միավորում նրանց: Երկուսի մեջ էլ մարդու ու ծիու հոգեբանական կապն է. ծիւ՝ վերացող տեսակ, վարձող ծիւ՝ անդունդի եզրին, ծիւ՝ մարդկության պատմության և մարդու ճակատագրի կենդանի վկա, որի հետ կապը հասնում է քարկապի և ունենում դրամատիկականից ավելի ողբերգական վերջաբան: Այդ հիշողությամբ այլևս անհնարին է ապրել, որովհետև այստեղ կյանքի ու մահվան խնդիրն է՝ ճակատագրի տեսք առած: Լրահոսում ժամանակի պաշտոնական ձայնն է. կենտրոնում՝ «Խոսում է Մոսկվան», ծայրամասում՝ «Խոսում է Երևանը», որոնցում ճշմարտությունը խեղդվում էր կեղծ ու պատիր ճառերի մեջ: Լրացման կարգով կարելի է հավելել նաև Սևակի «Խեղկատակը», «Ծաղրածուն», «Խաղալիք սարքողը» բանաստեղծությունները: Սա ճշմարտության մի երեսն էր՝ հակադրված այն ամենին, ինչ տարածում էր «Правда» գլխավոր պաշտոնաթերթը: Սա հենց վաթսուականների սերնդի ձայնն էր՝ խորքային, արդար ու ճակատագրական, պաշտոնական ստանդարտներին դեմ: Այս մտայնությամբ 1962 թ. դեկտեմբերին 30 ավանգարդիստ նկարիչ Մոսկվայի Մանեթում բացեցին ազատ արվեստի ցուցահանդես, որը ջախջախիչ քննադատության ենթարկվեց ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովի կողմից: Համանման մի աղմուկ էլ կապված էր «Մետրոպոլ» ալմանախի հրատարակության հետ, որը նույն այս սերնդի գրողները նախաձեռնեցին ավելի ուշ՝ 1979-ին: Ալմանախը լույս տեսավ 12 օրինակ և ընդգրկում էր տպագրվող հեղինակների մեծված, չտպագրված գործերը: Այստեղ էին հայտնի գրողներ Անդրեյ Բիտովը, Ֆազիլ Իսկանդերը, Վասիլի Աբայունովը և ուրիշներ: Այս լայն շրջանակի մեջ առանձին խոսակցության նյութ է Պարույր Սևակ-Սերգեյ Փարաջանով զուգահեռը: Երկուսն էլ նույն թվականի և նույն՝ հունվար ամսվա ծնունդ են, երկուսին էլ միավորում է սերը Սայաթ-Նովայի հանդեպ, երկուսին էլ սնունդ էր բանահյուսությունը: Ժողովրդական-կոմիտայան երգերի բանահյուսական հյուսվածքով հայտնի են Սևակի «Ամբելի զանգակատուն» պոեմը (1959) և Փարաջանովի «Մոռացված մախիների ստվերները» կինոնկարը (1964): Բանահյուսությունը դառնում է ոչ թե մտածողություն, դրա դարձ անցել էր, այլ ռեալիզմի հիմքերին մոտենալու հնարավորություն, և դա է պատճառը, որ նրանց միավորում էին արդիական մտածողությունը, գեղարվեստական պատկերի ժամանակակից գեղագիտությունը, որ արտահայտվում է բազմա-

ծայնությամբ, թռիչքային մտածողությամբ, հակադրությունների համադրությամբ, շարժման արագությամբ, կոլաժով, գունագեղությամբ... Այս տեսակետից դարձյալ զուգորդության համար բացառիկ են Փարաջանովի «Նռան գույնը» (1968) Սայաթ-Նովայի մոտիվներով և Սևակի «Սայաթ-Նովա» (1969) մենագրությունը՝ խաղերի պատկերավոր վերլուծությամբ: Փարաջանովի հետ Սևակի հասկապես «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» (1962), «Անլռելի զանգակատուն» (1959) և «Եռածայն պատարագ» (1969) պոեմների պատմափիլիսոփայության և պատկերամտածողության ընդհանուր համակարգում իր տեղն ունի նաև Անդրեյ Տարկովսկու անունը՝ «Անդրեյ Ռուբլով» (1966) շարժանկարով հանդերձ: Գեղարվեստի մի շերտ կա, որ ժամանակն իմաստավորող նույն ոգու ծնունդ է, որ հավասարապես իմաստավորում է բառը, գիծն ու գույնը, հնչյունը, պարային կշռույթը, թատրոնն ու կինոնկարը: Գեղարվեստի այդ շերտի ձեռքբերումը վաթսուականների սերնդի նվաճումն ու մենաշնորհն էր՝ անպայմանորեն պայմանավորված նաև Սևակի պոեզիայով ու արվեստի տեսությամբ: Որքան ողբերգական, նույնքան ազդեցիկ էր Սևակի մահը, որը հայ ժողովրդի, նրա հոգևոր առաջնորդ Վազգեն Վեհափառի և արվեստի մահապետ Մարտիրոս Սարյանի հետ մեկտեղ ողբաց նաև համայն մտավոր հանրությունը, ցավակցական հեռագրերով ու հրաժեշտի խոսքերով հանդես եկան այնպիսի նշանավոր բանաստեղծներ, արձակագիրներ, գրական քննադատներ ու թարգմանիչներ, ինչպիսիք են Էդուարդաս Մեծելայտիսը, Եվգենի Եվտուշենկոն, Անդրեյ Վոզնեսենսկին, Ռոբերտ Ռոժդեստվենսկին, Լև Օզերովը, Իվան Դրաչը, Յուրեն Մորիցը, Իմա Ռոստովցևան, Մորիս Փոցիսիշվիլին, Օլգա Սուլեյմանովը, Լեոնիդ Մարտինովը և ուրիշներ: Սևակի հեռացումով նրա պոեզիան չվերածվեց թանգարանային մուշի, այլ դարձավ գեղարվեստական խոսքի գործող ուժ, որ գիտակցեցին բոլորը՝ ժողովրդական լայն զանգվածներից մինչև բարձր մտավորականություն: Լույս էին տեսնում նրա գրքերը, կազմակերպվում էին հանդեսներ, նրա պոեզիան շարունակվում էր թարգմանվել ու հրատարակվել աշխարհի լեզուներով: Այդպես, որովհետև Սևակը գրեց ժամանակակից պոեզիայի պատմության մնայուն էջերից մեկը, որի հերոսը ինքն էր, իր ժողովուրդն ու իր ժամանակը...

**Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ**  
**ՀՀ արվեստի վաստակավոր**  
**գործիչ, բանասիրական գիտություն-**  
**ների դոկտոր, պրոֆեսոր**

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Պատմության մեջ գեներալներն ձևափոխված առաջին մարդկանց ստեղծած ծագումնաբանը Ցզյանկույ խեն, արևմտյան մամուլում ստացել է չինական Ֆրանկենշտեյն մականունը, իսկ սեփական երկրում եռամյա ազատազրկում:

2015 թ. Հիմաստամի ժողովրդական Հանրապետության գիտնականները հայտարարել էին մարդկային սաղմը գեներալկորեն վերափոխելու մասին. նրանք կարողացել էին «վերանորոգել» հենոզոֆի-նի վնասված այն գենը, որն առաջացնում է բետա-տալասեմիա՝ անբուժելի և ծանր ժառանգական հիվանդություն: Ներգործության պահին սաղմերը զարգացման ամենավաղ փուլերում էին և կազմված էին փոքրաթիվ բջիջներից, որոնց ոչ մի կերպ

## ԶԻՆԱՅԻ ԿԵՆՍԱԲԱՆԻ ԳԻՏԱՓՈՐՁԸ\*

չէր կարելի անվանել լիարժեք մարդ: Գիտափորձից հետո սաղմերը մեռցվել էին, և աշխատանքը մեծ աղմուկ չէր առաջացրել: Մի քանի տարի անց այս նվաճումը հաջողվել էր կրկնել այլ երկրներում:

Սակայն շատ չանցած՝ Հիմաստամից եկան հերթական նորությունները, և այդ ժամանակ վիթխարի աղմուկ բարձրացավ: «Երկու ջքնաղ փոքրիկ չինուկներ՝ Լուլուն և Նանան, իրենց ճիչերով ներկայանում են աշխարհին, ճիչեր, որ նույնքան առողջ են, որքան մի քանի շաբաթական ցանկացած մանկիկները»,- այսպիսի հայտարարությամբ Շենչեմի Հիմաստամի Հարավային գիտատեխնոլոգիական համալսարանի (SVSTech) աշխատակից Ցզյանկույ խեն 2018 թ. նոյեմբերի 25-ին շշմեցրել էր գործընկերներին: Անշուշտ, գաղտնիության նկատառումներից ելնելով՝ փոքրիկների անունները փոխված էին:

Բուն գիտափորձն էլ հիմնականում կատարվել էր արտակարգ գաղտնիության պայմաններում. խեն և նրա գործընկերներն ի սկզբանե ենթադրում էին, որ նրանց աշխատանքի արձագանքն առնվազն հակասական է լինելու:

Ձևականորեն խնդիրն ուներ միանգամայն բարոյական բնույթ: Երկվորյակների հայրը ՄԻԱԿ-ով հիվանդ էր և անգամ չէր երագում երբևէ հայր դառնալու մասին: Ցզյանկույ խենի թիմի հետազոտությունները երջանիկ ծնողին հույս պարզեցին՝ «ապրելու իմաստ, աշխատելու իմաստ, արժանապատիվ նպատակ»: Հիմացի կենսաբանները, որոնց շնորհիվ աշխարհ եկան Լուլուն և Նանան, ընդգծում էին, որ իրենց գաղափարը նույնպիսի նվեր է մարդկությանը, ինչպիսին արտամարմնային բեղմնավորման մեթոդիկան է, որի հեղինակը նպաստել է միլիոնավոր առողջ ե-



րեխաների ծնվելուն և 2010 թ. արժանացել է Նոբելյան մրցանակի: Սակայն խենի աշխատանքը նրան հասցրեց ոչ թե փառքի գագաթին, այլ մեղադրյալի աթոռին:

*\*Որոշ կրճատումներով արտատպվում է «Գիտության աշխարհում» հանդեսի 2023 թ. 4-րդ համարից:*



## ԴՐՎԱԳՆԵՐ ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ



Խմբագրության կողմից – Զ. Շիրազի կյանքի և ստեղծագործության բազում անհայտ և հետաքրքիր փաստեր են ամփոփված Բ.Գ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանի կազմած «Հովհաննես Շիրազ. Անտիպ էջեր» շարքի՝ արդեն իսկ հրատարակված չորս գրքերում: Մեծանուն գրողի հետ կապված այս ուշագրավ դրվագը տեղ է գտել այդ շարքի IV գրքում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ  
ԱՆՍՈՎՈՐ ԴԻՄՈՒՄԸ

Հովհաննես Շիրազի և Սիլվա Կապուտիկյանի որդին՝ ապագա նշանավոր քանդակագործ, ՀՀ ժողովրդական նկարիչ Արա Շիրազը, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում ուսանելիս ինչ-ինչ պատճառներով զրկվում է կրթաթոշակից: Այն վերականգնելու ակնկալիքով Շիրազը դիմում է բանաստեղծական գեղեցիկ հնարքի. 1963 թ. ՀԽՍՀ բարձրագույն կրթության մինիստր Գևորգ Հայրյանին է ներկայացնում այս չափածո դիմումը.

*Քանդակագործ որդի ունեմ, սովորում է վշտահար,  
Քանգի օրվա կոպեկ չունի, գլխին չունի հայր ու մայր:  
Մայրը դարձել չվող թռչուն՝ փրփուր փառքի մեջ կորել...  
Հայրը՝ անօգ, մայրը՝ անհոգ, ու որբուկն է մոլորվել:  
Հորն է քաշել... ինչ-որ չնչին մի չարության պատճառով՝  
Ձրկվել է նա թռչակից,- ինչպե՞ս ապրի հոր ճառով,-  
Աղերսում եմ կամուրջ կապես,  
Հոր ուսերից բեռը թափես...*

Գևորգ Հայրյանը, որը հանրապետության հեղինակավոր պետական գործիչներից էր (մասնագիտությամբ գրականագետ), օժտված լինելով հումորի զգացումով, ընթացք է տալիս Զ. Շիրազի չափածո դիմումին՝ կատարման համար այն հասցեագրելով Գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեկտորին ոչ պակաս սրամիտ մականությամբ.

*Թե սիրում ես Շիրազին,  
Որդուն հասցրու մուրազին...*

Դժվար չէ կռահել, թե մեծանուն գրողի ինքնատիպ և սրամիտ դիմումի հարցում ինչ ազդեցություն ունեցավ միմիստրի՝ ընդունված ձևաչափից դուրս նույնքան արտասովոր մակագրությունը:

## ԽՈՐԻՄԱՍ ՄՏՔԵՐ

● Փառքը թույն է, որը պետք է ընդունել փոքր չափաքանակներով:

ԲԱԼԶԱԿ

● Ձգուշացի՛ր նրանից, ով չի պատասխանում քո հարվածին:

ԲԵՌՆԱՐԴ ՇՈՌԻ

● Ժլատը չի հիշում, թե որքան արագահոս է ժամանակը, և որքան կարճատև է կյանքը:

ԴԻԴՐՈ

● Երգիծանքն այնպիսի հայելի է, որի մեջ նայողը տեսնում է ամեն մի դեմք, բացի սեփականից:

ՍՎԻՖԻԸ

● Լռությունը հիմարների առաքինությունն է:

ԲԵԿՈՆ

● Հիմարը մի առավելություն ունի խելացիի նկատմամբ. նա միշտ գոհ է ինքն իրենից:

ՆԱՊՈԼԵՈՆ I

● Ամենամեծ սխալն այն է, երբ կարծում ես, թե դու երբեք չես սխալվում:

ԿԱՐԼԱՅԼ

● Աշխատանքը մեզ ազատում է երեք մեծ չարիքից՝ ձանձրույթից, մոլություններից և կարիքից:

Ուրիշի գաղտնիքը հայտնելը դավաճանություն է, իրենը հայտնելը՝ հիմարություն:

ՎՈԼՏԵՐ

● Հասկանալու համար, որ երկինքն ամեն տեղ կապույտ է, պետք չէ շուրջերկրյա ճանապարհորդություն կատարել:

ԳՅՈՒԹ

● Երմեկ այն ազգին, ով սրտեր է գրավում և ոչ թե... հողեր, որ լեզու է տալիս և ոչ թե... լեզու պոկում:

ՇԻՐԱԶ

## Աշխարհի ամենաշքեղ հյուրանոցները

Աշխարհի ամենաշքեղ հյուրանոցները, որտեղ երբևէ կայացել են ամենաշքեղ հարսանիքներն ու միջոցառումները, առանձնանում են իրենց ինքնատիպ ձևավորումով և անհավանական շքեղությամբ, ներկայացնում է rbc.ru-ն:

Marina Bay Sands,  
ՄԻՆԱԳՆՈՐ

Հյուրանոցը հայտնի է 3 կառույցներն իրար միացնող տանիքով, որտեղ տեղակայված են այգին և լողավազանը: Իսկ հյուրանոցի ներսում այգի են ընկնում թանգարանը, խանութներն ու 7 ռեստորանները, 2 թատրոններն ու սառցադաշտը: Հյուրանոցն ունի նաև խաղատուն՝ 500 խաղասեղաններով: Այն կառուցելու համար ծախսվել է 8 մլրդ դոլար:

Burj Al Arab,  
ԴՈՒԲԱԿ

Դուբայի 7 -աստղանի հյուրանոցը բացվել է 1999-ին: Այն համարվում է աշխարհի ամենաբարձր հյուրանոցներից մեկը և հայտնի է ինքնատիպ ճարտարապետությամբ: Հյուրանոցի տանիքին կառուցված է ուղղաթիռների թռիչքի համար նախատեսված հարթակ: Աշխարհի ամենաբարձր երկնաքերի՝ Բուրջ Խալիֆի հետ համարվում է Դուբայի խորհրդանիշը:

Atlantis The Palm,  
ԴՈՒԲԱԿ

5-աստղանի շքեղ հյուրանոցը տեղակայված է Դուբայի՝ արմավենու տեսք ունեցող արհեստական կղզիներից մեկի վրա: Այն հիանալի վայր է լողափային հանգիստն անցկացնելու համար: Հյուրանոցի շինարարությունն արժե 1,5 մլրդ դոլար: Այս վեհաշուք ժամանակակից շինությունը կրում է նաև արևելյան ճարտարապետությանը բնորոշ նրբերանգներ:

Emirates Palace,  
ԱՐԵՎԻԴԱՐԻ

Emirates Palace-ը Kempinski հյուրանոցային ցանցի մարգարիտն է: Գտնվելով Արև Դարի կենտրոնում՝ այն իր այցելուներին է առաջարկում ամենաշքեղ լողավազանները, սպա կենտրոնները, մանկական խաղահրապարակն ու ուղտերով զբոսնելու համար նախատեսված տարածքը: Այն կառուցվել է 6 մլրդ դոլարով: Մշտապես այստեղ են իջևանում Արաբական Միացյալ Էմիրաթներ այցելող տարբեր երկրների առաջնորդները:

Sheraton Huzhou Hot Spring  
Resort, ՉԻՆԱՍԱՆ

Մատանու տեսք ունեցող 27- հարկանի շենքը գտնվում է Հուչժոու քաղաքում: Եզակի ու շքեղ կառույցի նախասրահի առաստաղը զարդարված է 20 հազար Swarovski բյուրեղներով: Հյուրանոցի կառուցման աշխատանքների համար ծախսվել է 1,5 մլրդ դոլար:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ԴՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ բաժնի վարիչների հետևյալ թափուր պաշտոնների համար

**Միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ**  
**Վիճագրության բաժնի վարիչ**  
Մրցույթի պայմաններին կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կայքէջում՝ [iae.am](http://iae.am) կամ դիմել ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, Բ.Գ.Ք. Տորք Դալայանին: Ամհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.  
1. դիմում,  
2. երկու լուսանկար՝ 3x4 չափի,  
3. քաղվածք աշխատանքային գրքույկից,  
4. ինքնակենսագրություն,  
5. անձնագրի պատճեն,  
6. գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն,  
7. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,  
8. վերջին 10 տարում հրատարակած աշխատանքների ցանկը՝ հաստատված համապատասխան կարգով,  
9. բնութագիր վերջին աշխատանքի վայրից:  
Դիմումներն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Դի-

մումները համապատասխան փաստաթղթերով ներկայացնել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենություն (տնօրենի տեղակալ Տ. Դալայանին, բացի շաբաթ և կիրակի օրերից) հետևյալ հասցեով՝ Հարենցի 15, հեռ. (010) 556896:

**ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ**

*Գիտություն*

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16  
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է տպագրության՝ 26.02.2024 թ.:

"ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА